ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2016 թ. հունվարի 22-ին, թիվ 4-Ա
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.5 կետի <<ա>> ենթակետով, 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1459-Ն որոշմամբ հաստատված հավելվածը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2009 թվականի հուլիսի 14-ի N 83-Ա կարգադրությամբ ստեղծված մոնիթորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվությունը.

որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի կատարողականը՝ համաձայն N 2 հավելվածի:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Արձանագրություն

ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման հանձնաժողովի նիստի

21.01.2016թ

Նախագահությամբ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի

ՕՐԱԿԱՐԳ՝

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

ՀՀ Արագածոտնի մարզային զարգացման հանձնաժողովը:
Մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը:
Աշխատակազմի վարչության պետեր և առանձնացված ստորաբաժանումների պետեր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

ՀՀ Արագածոտնի մարզպետ պարոն Ս. Սահակյանը:
Մարզպետի տեղակալ պարոն Մ.Աբգարյանը:
Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ պարոն Ի. Բարսեղյանը:
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման հաշվետվությանը և ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության քննարկմանը:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2016 թ. հունվարի 22 -ի N 4 -Ա որոշման

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

ԱՇՏԱՐԱԿ 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
3. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՈԼՈՐՏ
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ
4.1. Կրթություն
4.2. Մշակույթ, սպորտ, երիտասարդություն
4.3. Առողջապահություն
4.4. Սոցիալական պաշտպանություն, երեխաների իրավունքների պաշտպանություն
5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
7. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ
8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
8.2 ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
8.3 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ
9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
9.1. Տարածքային կառավարում
9.2. Տեղական ինքնակառավարում
9.3. Քաղաքացիական հասարակություն
9.4. Ֆինանսական բնագավառ
10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԽ- Աշխատանքային խումբ
ԱՄԳ -Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ -Ազգային վիճակագրական ծառայություն
ԱԾԽՄ -Առանց ծնողական խնամքի մնացած
ԳԶՄՀ- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԵՄ- Եվրամիություն
ԿԶԾ – Կայուն զարգացման ծրագիր
ՀԿ -Հասարակական կազմակերպություն
ՀՀՈԲԾ- Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ -Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏԶԾ- Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ -Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ -ԶԾ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ- Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ

ՄԳ -Մոնիտորինգ և գնահատում
ՄԶԱՀ -Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԾ -Մարզի զարգացման ծրագիր
ՄԶՀ -Մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶՄԿ- Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԶՆ -Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ -Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ -Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱԽ -Ոլորտային աշխատանքային խումբ
ՊՈԱԿ- Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԾՏԳ- Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ -Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԱՊ -Տարեկան աշխատանքային պլան
ՏԻ -Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ -Տեղական ինքնակառավարման մարմին
ՈՒԹՀՎ- Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ -ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ -ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕՈՒՆ- Օտարերկրյա ուղղակի ներդրումներ
ՀՃԾ – Հակաճգնաժամային ծրագիր

2.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1459-Ն որոշմամբ հաստատվեց Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը, (այսուհետ Ծրագիր) 2015 թվականի աշխատանքային պլանի տարեկան հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 14.07.2009թ. թիվ 83-Ա կարգադրությամբ հաստատված, Արագածոտնի մարզային զարգացման ծրագրի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խմբի կողմից:

Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Հայաստանի Հանրապետության կառավարության ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1459-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի աշխատանքային պլանի տարեկան հաշվետվություն:

<u>ՏԱՊ-ի նպատակներն են.</u>

ա. Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ,

բ. Կապել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ ,,տրամաբանական հենքի,, համակարգի օգնությամբ,

գ. Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում,

դ. Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումներն իրականացնելու համար,

ե. Հնարավորության դեպքում սահմանել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների,

զ. Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2015 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

1) Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
3) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
4) Արդյունաբերության զարգացում
5) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
10) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
11) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
12) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում
13) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
14) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
15) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Ծրագրի ֆինանսավորումը

Մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են՝ պահանջվող ընդհանուր գումարը կազմում է ավելի քան **18,372,761.1** հազար դրամ:

2015 թվականի ՏԱՊ-ով նախատեսվել է իրականացնել **124** միջոցառում, որի համար ֆինանսավորումը կազմում է **13,292,584.2** հազար դրամ, այդ թվում ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝ **11,126,084.2** հազար դրամ: Նշված միջոցառումներից **31.12.2015** թվականի դրությամբ կատարվել են 3**8** միջոցառումներ **1171 443,4** հազար դրամ գումարով, 7**6** միջոցառումներ՝ **9,954,640.8** հազար դրամ գումարով, դեռ չեն սկսվել:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի դրությամբ մարզում կատարվել է **452** միջոցառումներ՝ **51,506,486.4** հազար դրամի ներդրում, որը կազմում է տարեկան ծրագրի **387.5** տոկոսը, այդ թվում ՀՀ պետական բյուջեից հատկացումներ՝ **46,860,637.4** հազար դրամ Միջազգային կազմակերպություններ, դոնորներ,բանկեր և /վարկային միջոցներ/ հատկացումներ՝ **2,242,031.4** հազար դրամ, Համայնքային բյուջեից հատկացումներ՝ **415,390.6** հազար դրամ, Մասնավոր ներդրողներ հատկացումներ՝ **1,712,660.0** հազար դրամ, Այլ աղբյուրներ հատկացումներ՝ **275,767.0** հազար դրամ:

2015 թվականի ՏԱՊ-ով նախատեսված և 31.12.2015թ. դրությամբ իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 1-ում**:

ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2015 թվականի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է **հավելված 2-ում**:

Ծրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը

ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

1) Քաղաքականության ուսումնասիրում
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
3) Մասնակցային մոնիտորինգ և գնահատում
4) Ազդեցության գնահատում:

Ծրագրի հաշվետվության կառուցվածքը

ՄԶԾ միջանկյալ հաշվետվության ոլորտային բաժինների կառուցվածքը բաղկացած է 4 հիմնական բաժիններից.

1) Քաղաքականության վերլուծություն
2) Իրականացման առաջընթացը
3) Խնդիրները
4) Քաղած դասերը և հետագա քայլերը:

Քաղաքականության վերլուծություն: Այստեղ ամփոփվել են ոլորտի համար տարվա կտրվածքով առաջարկված ցուցանիշները և միջոցառումները:

Իրականացման առաջընթացը: Այս բաժնում նշվել են 2015 թվականի ձեռքբերումները և դրանք կապվել ՏԱՊ-ի արդյունքային ցուցանիշների հետ:

Խնդիրները: Այստեղ նկարագրվել է տարվա ընթացքում ծագած յուրահատուկ խնդիրները և խոչընդոտները:

Քաղած դասերը և հետագա քայլերը: Այս բաժինը բացահայտում է հետագա այն խնդիրները, որոնք բյուջեի և պլանավորման գործընթացի հիմքը կհանդիսանան:

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 Քաղաքականության վերլուծություն

Արդյունաբերության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2015-2018 թթ.-ի ՄԶԾ-ով առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

Արագածոտնի ՄԶԾ-ի արդյունաբերության և ՓՄՁ բաղադրիչի նպատակներն են.

1. Աջակցություն մարզի ՓՄՁ պետական աջակցության կիսամյակային ծրագրերի

իրականացմանը

2. Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն

3. ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների) շուկաներ առաջմղմանն աջակցություն

4. ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

5. Ուսուցողական աջակցության ծրագիր:

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՏԱՊ-ով նախատեսվում է.

1) Աջակցություն մարզի արդյունաբերական ձեռնարկություններին և ՓՄՁ պետական աջակցության կիսամյակային ծրագրերի իրականացմանը
2) Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ մարզի գործարարների շրջանակներում տեղեկատվության տարածման միջոցառումների իրականացում:

Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ԶԱԿ-ի Արագածոտնի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզի խորհրդի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ոլորտի աջակցության կիսամյակային պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

Այս նպատակներին հասնելու համար ՄԶԾ-ով և ՏԱՊ-ով առաջարկվում է 2015- 2018թթ.-ի ընթացքում իրականացնել միջոցառումներ 4 փուլով:

1-ին փուլը նվիրված է գործարարության զարգացման ռեսուրսների հաշվառմանը, գույքագրմանը և ապրանքների ու ծառայությունների իրացման շուկաների գնահատմանը:

2-րդ փուլը ընդգրկում է շուկայի ուսումնասիրությունը, մասնավոր հատվածի զարգացման գերակա ոլորտների տարածաշրջանային/համայնքային հայեցակարգերի մշակումն ու ընդունումը, աշխատուժի պահանջարկի վերլուծությունը, ոլորտային մասնագետների և կառավարիչների վերապատրաստման աշխատանքների համակարգումը,

3-րդ փուլում կմշակվեն տարածաշրջանային առաջարկներ՝ գերակա ոլորտներում մասնավոր ներդրումների ներգրավման նպատակով:

Այս փուլերի աշխատանքները մարզում ընթանում են: Ստեղծվում է վիճակագրական տեղեկությունների փաթեթ

4-րդ փուլում կիրականացվեն ներդրումային առաջարկների փաթեթների կազմման և առաջմղման միջոցառումներ՝ ներդրումային հնարավորությունների ներկայացում և այլն: Նախատեսվում է առաջին 4 փուլերն իրականացնել 2015 թ.-ի ընթացքում:

Հիմնական շեշտը դրվում է բնագավառի ՓՄՁ սուբյեկտների զարգացման, նոր արտադրությունների կազմակերպման, դրանց ֆինանսական վիճակի ամրապնդման, համախառն արտադրանքի և իրացման ծավալների ընդլայնման վրա:

3.2 Իրականացման ձեռքբերումները

Մարզում արդյունաբերության և ՓՄՁ ոլորտում իրականացված աշխատանքներն ըստ աջակցման գործիքների և սուբյեկտների կարելի է խմբավորել՝

1) Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագիր
2) Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագիր
3) Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագիր
4) Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն
5) Ուսուցողական աջակցություն
6) Նեղ մասնագիտական խորհրդատվություն:

Մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից հանդիսացող արդյունաբերությունը, անկախության տարիների ընթացքում ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Ներկայումս Արագածոտնի մարզի արդյունաբերությունը մասնագիտացած է քաթնամթերքի,սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ուղղությամբ:

<u>ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորության տրամադրման ծրագիր:</u>

Մարզում գործող ձեռնարկություններում 2015 թվականի ընթացքում իրականացվել են ներդրումնային ծրագրեր, որոնք ավելացրել են ինչպես ձեռնակության արտադրական հնարավորությունները, այնպես էլ աշխատատեղերի թիվը: 2015 թվականի ընթացքում ՓՄՁ ԶԱԿ Արագածոտնի մասնաճուղ է ներկայացվել **5** վարկային երաշխավորության տրամադրման աջակցությունից օգտվելու հայտ: Հայտերը գտնվում են բանկերի ուսումնասիրության փուլում: Ընդունված հայտերը Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններից են: Վարկային փաթեթի արժեքն է **44.0** մլն դրամ:

<u>Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության ծրագիր:</u>

2015 թ-ին Աշտարակ, Ապարան և Թալին քաղաքներում անց են կացվել սկսնակ գործարարների աջակցության 2 ծրագիր: Ծրագրին մասնակցել է մոտ 22 գործարար: Ծրագրի ավարտից հետո ունկնդիրները ներկայացրել են իրենց հետագա գարծունեության բիզնես ծրագրերը: Դրանք քննարկվել են և քննարկումն ավարտվելուց հետո որոշվել են երկու լավագույն ծրագրերը, որոնց հեղինակներին ծրագիրն իրականացնելու նպատակով տրվել է 3.**0** միլիոն դրամի աջակցություն՝ որպես անհատույց ներդրում:

<u>Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագիր:</u>

2015 թվականի ընթացքում ՓՄՁ սուբյեկտների թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների շուկաներ առաջ մղման աջակցության ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել **4** ՓՄՁ սուբյեկտ՝ Ապարան և Աշտարակ քաղաքներից և Ծաղկահովիտից: ՓՄՁ **3** սուբյեկտների համար էլ պատրաստվել են գովազդային վահանակներ՝ ծավալային տառերի տեսքով:

<u>Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն:</u>

Տեղեկատվական աջակցության ծրագրի շրջանակներում 2015 թվականի ընթացքում աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն է ստացել **352** գործարար: Իրավաօրենսդրական ակտերի և դրանցում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն է ստացել **44** գործարար: Ինտերնետից օգտվել է **53** գործարար: Տեղեկատվական և գործարար ուղեցույցներ է տրամադրվել **545** գործարարի, որն ընդգրկել է մարզի քաղաքները և գյուղական բնակավայրերը:

Ընդհանուր առմամբ **758** գործարարի տրվել է աջակցություն:

<u>Ուսուցողական աջակցություն:</u>

Ուսուցողական աջակցության ծրագրի շրջանակներում Ապարանի քաղաքային համայնքներում հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել է ուսուցողական-տեղեկատվական բնույթի միջոցառում, որի ընթացքում ներկայացվել է «ՓՄՁ սուբյեկտների հարկային հաշվառման պարզեցված ուղեցույց» և «Հարկային օրացույց 2015» նոր հրատարակությունները և տրվել է պարզաբանումներ հարկային դաշտում տեղի ունեցած վերջին փոփոխությունների վերաբերյալ: Միջոցառմանը մասնակցել է մոտ 77 գործարար:

2015 թվականի ընթացքում ոլորտում կատարվել է **2,218,900.0** հազար դրամի ներդրում, որը կազմում է տարվա համար նախատեսված ծրագրի **150.9** տոկոսը:

Խնդիրները

Վերոնշյալ ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզում դեռևս ցածր է արդյունաբերության և ՓՄՁ սուբյեկտների տարածաշրջանային ընդգրկվածությունը /ծրագրերում ընդգրկվել են առավելապես Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածաշրջանի սուբյեկտները/: Շարունակում է խնդիր մնալ նաև սկսնակ գործարարների և գյուղական համայնքների ներգրավվածությունը աջակցման ծրագրերում:

<u>3.4. Արդյունաբերության և ՓՄՁ ոլորտի արդյունքային ցուցանիշները</u>

Աղյուսակ 1 Արդյունաբերության ՓՄՁ ոլորտի 2015 թ. արդյունքային ցուցանիշները

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ	Փաստացի

Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին:	Արդյունաբերության, ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով: Քաղաքապետարաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի պատասխանատուներ են նշանակվել	Մշակել ոլորտի զարգացման տարածաշրջա-նային 2 ծրագիր Աջակցություն տալ 1200 գործարարի	Մշակված է ոլորտի զարգացման տարածաշրջա-նային 2 ծրագիր: 2-րդն ընթացքի մեջ է: Աջակցություն է ստացել 515 գործարար
ՓՁՄ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում:	Խորհրդատվության մատուցման մրցույթները կայացածված և ֆինանսավորված են ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչները ներգրավված են ծրագրերի մշակման գործընթացում Ընդունված են մասնավոր հատվածի զարգացման 2 տարածաշրջանային և 20 համայնքային ծրագրեր Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները		
ՓՁՄ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում:	Ապարան քաղաքում մշակվում է տեխնոպարկի հիմնման ծրագիր	Ծրագիրն ավարտել 2016 թ. դեկտեմբերին:	Մշակվել են ծրագրի իրականացման սկզբունքները: Հստակեցվում են ուղղությունները:

Նպաստել տեղացի արտագնա, այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզի զարգացման ներդրումային ծրագրերում:	Սանկտ-Պետերբուրգ քաղաքի ատվիրակության հետ քննարկվում է համատեղ ձեռնարկությունների կազմակերպման և դրանց համաֆինան-սավորման, առևտրի զարգացման ծրագիր	Հանրապետությունում գործող արտասահմանյան կառույցներին է ներկայացված 28 ծրագիր	Հաստատվել է համայնքային ներդրումային 6 ծրագիր:
	Սանկտ-Պետերբուրգի մարզին ներկայացված են ՓՄՁ ոլորտում փոխգործակցության առաջարկներ	Ծրագիրն սկսել 2016 թ. հունվարին	Ծրագրերը ներկայացված են
Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում **Ներդրումային հնարավորու-թյունների ներկայացման միջո-ցառումների կազմակերպում** **Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում** **Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում**	Արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտներին տեղեկություններ տրամադրել մարզում և հանրապետությու-նում գործող վարկային, ֆինանսական, խորհրդատվական և բիզնեսի հետ առնչություն ունեցող այլ կազմակերպու-թյունների հետ, տրամադրել անհրաժեշտ գրականություն, մեթոդական ձեռնարկներ, օրենսդրությանը վերաբերող նյութեր	Ծրագիրը շարունակական է պլանավորվող ողջ ժամանակի համար	Ծրագրերն իրականացվում են, տեղեկատվու-թյունը տրված է:
Աջակցություն ցուցաբերել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման ձեռնարկությունների մրցունակության բարձրացմանը:	Մշակվել՝ մարզում տուրիզմի և զբոսաշրջության զարգացման հայեցակարգ	Առաջարկություն-ներ են ներկայացվել Սանկտ-Պետերբուրգի մարզին՝ ճյուղի զարգացման և համատեղ ներդրումների համար	Ծրագիրն ընթացքի մեջ է

3.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման համար:

Գոյություն ունեցող խնդիրների առկայության պարագայում ՄԶԾ արդյունաբերության և ՓՄՁ աջակցման ծրագիրը շարունակում է իրագործվել և այս ուղղությամբ զգալի առաջընթաց է արձանագրվել:

Սակայն որոշ հիմնախնդիրներ լուծման կարիք են զգում: Մասնավորապես, դժվար է տեղեկատվություն ստանալ մարզում գործող բոլոր արդյունաբերական և ՓՄՁ սուբյեկտների, նրանցում զբաղված մարդկանց, ձեռնարկությունների տնտեսական վիճակի և ծագած հիմնախնդիրների մասին: Առանձնապես չկան այդ կազմակերպություններում զբաղված աշխատողների սոցիալական վիճակի մասին տվյալներ: Ծրագրերի ֆինասավորման գործում նույնպես անորոշություն է տիրում: Չկա առանձնապես կարևոր, գերակա ուղղությունների առաջնահերթ ֆինանսավորման կամ վարկավորման հայեցակարգ: Ապարանում գործող ՓՄՁ ԶԱԿ-ի գրասենյակը հնարավորություն չունի ամբողջովին տիրապետել հիմնախնդիրներին և ներկայացնել առաջարկներ՝ վիճակը շտկելու համար:

Արդյունաբերության և ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը, հիմնախնդիրների լուծումը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման և հետգա ռազմավարության մշակման համար:

4.ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4.1.1 Քաղաքականության վերլուծություն

Ելնելով մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը շարունակվում է դիտվել որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2015 թ-ի ընթացքում Մարզում ուշադրություն է դարձվում միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի ու գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը: Անհրաժեշտ է նաև իրականացնել հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ:

Շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների, որպես ինքնակառավարման մարմինների, ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման ծրագրերը:

4.1.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ Արագածոտնի մարզում գործում է 122 դպրոց, այդ թվում՝ 79-ը՝ միջնակարգ, 39-ը՝

հիմնական, 1-ը՝ հատուկ և 3 ավագ: Աշտարակ քաղաքում գործում է արհեստագործական ուսումնարան՝ 10 խմբով (157 աշակերտ): Ծաղկահովիտում՝ արհեստագործական ուսումնարան 7 խումբով (97 աշակերտ):

Արագածոտնի մարզպետարանի տվյալների համաձայն՝ 2015-2016թթ. ուսումնական տարում մարզի 122 հանրակրթական դպրոցներում աշխատում է 2,778 ուսուցիչ, այդ թվում 2,175 կին և 603 տղամարդ: Ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությունը 2014-2015թթ. ուսումնական տարում կազմել է 1/6.2, իսկ 2015-2016թթ. ուս. տարում՝ 1/6.2:

2015-2016թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորում է 17,339 աշակերտ, որը 2014-2015թթ. ուսումնական տարվա համեմատ նվազել է 144 աշակերտով: 2015-2016թթ. ուսումնական տարում առաջին դասարան են հաճախել 1803 երեխա, իսկ 2014-2015թթ. ուս. տարում՝ 1697 երեխա: Դասարանների թիվը 2015-2016թթ. կազմել է 1267 (նախորդ տարվա համեմատ պակասել է 26-ով): Դասարանների նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության հետ: Մարզում բոլոր երեխաները հաճախում են դպրոց:

Հանրակրթական 18 դպրոցի ուսուցչի տները հանձնվել են ՀՀ պետգույքի կառավարման վարչությանը: 2015 թվականի մարզի 45 հանրակրթական դպրոցի տարրական դասարանների 2871 աշակերտ միացել է ՄԱԿ պարենի համաշխարհային **«Դպրոցական սնունդ»** ծրագրին:

2014-15 ուսումնական տարում Աշտարակի թիվ 3 հիմնական դպրոցում 7 աշակերտի հետ իրականացվել է ներառական կրթություն:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական 50 դպրոցում ջեռուցումը լոկալ է: Հանրակրթական դպրոցները ապահովված են վառելիքով:

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտն ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում սովորողի ընդունելությունը, տեղափոխումը և ազատումը կատարվում է համաձայն ՀՀ ԿԳ նախարարի <<ՀՀ ուսումնական հաստատության սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգի>> :

2015 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի որոշմամբ մարզի 4 դպրոցի կառավարման խորհրդի կազմում կատարվել է փոփոխություն:.

2015 թվականին ՀՀ տարածքային կառավարման և կրթության և գիտության նախարարությունների կողմից ներկայացված նախագծերը քննարկվել են ՀՀ Արագածոտնի մարզպետարանում և 5 նախագծերի վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

2015 թվականին ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությամբ դպրոցական աշխատանքները ոչ պատշաճ կատարելու համար կարգապահական տույժի է ենթարկվել հիմնական դպրոցի մի քանի տնօրեններ:

Մարզի 9 հանրակրթական դպրոցներում ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների դպրոցի կառավարման խորհրդում կատարվել է խորհրդի կազմի փոփոխություն:

2015 թվականին մարզի 9 հանրակրթական դպրոցում Մաստարայի, Իրինդի, Քուչակի, Սիփանի,Ակունքի, Սուսերի միջնակարգ և Արտենիի, Միջնատան, Մեծաձորի հիմնական դպրոցներում հայտարարվել և կազմակերպվել է դպրոցի տնօրենի թափուր տեղի համար

մրցույթ:

Ուսուցչի թափուր տեղի մրցույթն իրականացվում է 2010 թվականի հոկտեմբեր ամսից,իսկ 2013 թվականից ՀՀ ԿԳ նախարարի հուլիսի 30-ի 1001 հրամանով հաստատված կարգով: 2015 թվականին մարզի 71 հանրակրթական դպրոցներում հայտարարվել է ուսուցչի թափուր տեղի մրցույթ՝ տարբեր առարկաներից: Մրցույթում հաղթող ճանաչված մասնակցների հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր: Մրցույթ չկայանալու կամ մրցույթի արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքում հայտարարվել է նոր մրցույթ:

ՀՀ Արագածոտնի մարզի 34 հանրակրթական դպրոցում գործում է նախակրթարան՝ 514 երեխայով;

Մարզի հանրակրթական դպրոցների լիցենզավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացվել է ՀՀ ԿԳ նախարարություն: Սահմանված ժամկետում սկսվել է մարզի հանրակրթական դպրոցների լիցենզավորման աշխատանքները: Մարզի հանրակրթական դպրոցները ստացել են լիցենզիա, բացառությամբ՝ Օշականի հիմնական, Կարին դպրոցների, որոնք ունեն դպրոցի շենքը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու շենքի վկայականի ձեռք բերման խնդիր:

Կազմակերպվել և անց է կացվել <<Տարվա լավագույն տնօրեն>>/Հովիկ Մելքոնյան,Ն.Սասանաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն/, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> /Ռաֆայել Մարգարյան,Ն.Բազմաբերդի ֆիզկուլտուրայի ուսուցիչ/,<<Տարվա լավագույն դաստիարակ>>/Սաթիկ Գիլանյան,Արաքս Մուրադյան մանկապարտեզ/:

2015թ. մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել և իրականացվել է հանրապետական մաշտաբով սպորտային միջոցառումներ:

Կազմակերպվել և անցկացվել է ՀՀ դպրոցականների 1-6-րդ դասարանների ՀՀ Ազգային Ժողովի խաղարկության գավաթի մրցումներ, ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերին մասնակցել են 85 դպրոցի 2300 աշակերտ: Կազմակերպվել և անց է կացվել <<Լավագույն գյուղական մարզական համայնք>>, <<Լավագույն մարզական ընտանիք>> միջոցառումները: Լավագույն 12 ընտանիք Ծաղկաձորում մասնակցել է հանրապետական եզրափակիչ փուլին: Մարզի 37 ըմբիշներ 2015թ. մասնակցել են հանրապետական և միջազգային տարբեր մրցաշարերի:

2015 թվականին մարզի 20 պատանի շախմատիստները 11 օր մասնակցելու են Անդրանիկ Մարգարյանի հիշատակին նվիրված հուշամրցաշարին Երևանում, Ջերմուկում քաղաքում կայացած շախմատի Հայաստանի <<Ա>> խմբի կիսաեզրափակիչ առաջնությանը: Ջերմուկում 2015 շախմատի մրցաշարին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների 10 աշակերտներ: Բաթումի քաղաքում կայացած Եվրոպայի պատանիների առաջնությանը մասնակցել է 8–ամյա Արսեն Դավթյանը: ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ ՀՀ Արագածոտնի համայնքներում գործող մշակույթի տներում անվճար կազմակերպվել են կինոդիտումներ և ներկայացումներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացն կազմակերպելու նպատակով <<Հայոց Արծիվներ>> հասարակական կազմակերպության կողմից մարզի 40 հանրակրթական դպրոցներին տրամադրվել է օդամղիչ հրացաններ: 79 հանրակրթական դպրոցներ ունեն

ուսումնական զենք-զինամթերք, որից 9 դպրոցների պահանջարկը ուղարկվել է ՀՀ ԿԳՆ, իսկ 9 դպրոցների համար սպասվում է ոստիկանության եզրակացությունը: Մարզի 8 դպրոցներում աշխատանքները ընթացքի մեջ են, իսկ 14 դպրոցներ չունեն շենքային պայմաններ: Անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր, որին մասնակցել է մարզի 86 հանրակրթական դպրոց: Զինկոմիսարիատների հետ համագործակցաբար անցկացվել է կցագրման աշխատանքներ: ՀՀ ԿԳ նախարարի, ՀՀ ՊՆ նախարարի և ԵԿՄ- ի կողմից համատեղ ստորագրված հուշագրի համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում ստեղծվել է <<Երկրապահների կամավորական միության ակումբ>> Ակումբի մասնակից պատանիները ակտիվորեն մասնակցել են վերապատրաստման դասընթացներին: Դասընթացների ավարտից հետո պատանիները կհանձնեն քննություն և կստանան <<սերժանտ>>-ի կոչում:

ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից մարզի 523 ուսուցիչների համար կազմակերպվել է նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ, իսկ <<Հայ եկեղեցու պատմության, <<Ես և շրջակա աշխարհ>> առարկաներից վերապատրաստման դասընթացներ չեն անցկացվել, քանի որ այդ առարկաները ցանկում ընդգրկված չեն եղել:

ՀՀ ԿԳ նախարարության կրթության ազգային ինստիտուտի Արագածոտնի մասնաճյուղի կողմից կազմակերպվել է նաև ազգային փոքրամասնությունների / եզդիերեն լեզվի/ 18 ժամյա վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է 15 ուսուցիչ, սկսնակ ուսուցիչների վերապատրաստման 15 ժամյա դասընթացներ, որին մասնակցել է 86 ուսուցիչ, ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցիչների վերակատրաստման 12 ժամյա դասընթացներ, որին մասնակցել է 24 ուսուցիչ:

2015թ. դեկտեմբերին ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի կողմից կազմակերպվել է 18 ժամյա վերապատրաստում մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների մասնագիտացված կրթական աջակցության գծով տեղեկալների և մանկական կոլեկտիվների կազմակերպիչների վերապատրաստման դասընթացներ:

ՀՀ ԿԳՆ-ի 2013թ.18.10 N 665-Ա հրամանով ձևավորված Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովի աշխատանքները սկսվել և ավարտվել է սահմանված ժամկետում:

Ատեստավորման ենթակա ուսուցիչների համար հանձնաժողովը կայացրել է 592 ուսուցչի համար <<համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին>> որոշում:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղի մրցույթների հայտարարությունները դպրոցների կառավարման խորհուրդների նախագահների կողմից ժամանակին տեղադրվել են մարզային և հանրապետական թերթերում, edu.am, azdarar.am կայքերում, իսկ ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունները՝ ՀՀ ԿԳՆ <<Կրթություն>> շաբաթաթերթում:

ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում ժամանակին կազմակերպվել և անց է կացվել դպրոցականների **առարկայական օլիմպիադաների** տարածքային և մարզային փուլերը: Հաղթող ճանաչված 100 աշակերտները մասնակցել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին:

Աղյուսակ 2. Կրթության ոլորտի 2015 թ. արդյունքային ցուցանիշները

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ **Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Արագածոտնի մարզում**	1. Համախառն ընդգրկվածությունը հիմնական դպրոցում 2. Աշակերտ ուսուցչական դրույք հարաբերակցությունը՝ հանրակրթության բնագավառում- 3. Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը -2015 թ.-ին համակարգի նորոգում: 4. 3-6 կիսամյակային երեխաների նախադպրոցական հաստա-տություններում ընդգրկվածու-թյան տեսակարար կշիռը այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում 5. Հանրակրթական ծառայու-թյունների որակից աշակերտների և ծնողների բավարարվածության աստիճան 6. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ	99,8 % 6: 1 58 3 դպրոց 28 % 1900 երեխա 78 % 48 %	99.8% 5.8 58 3 28 % 1977 երեխա 78% 47%
1. Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում:			
Ծրագիր 1. **Դպրոցական շենքերի վերանորոգում,**	Վերանորոգված դպրոցներ- Վերանորոգման առաջնահերթ կարիք ունեցող դպրոցական շենքերի, մարզադահլիճների, ջեռուցման համակարգերի նորոգումները կատարված են: Լոկալ ջեռուցում ունեցող դպրոցների թիվը 2015 թ. դպրոց:	98 24 46	98 24 46

Նյութատեխնիկական բազայի արդիականացում **1.1. Լաբորատոր սարքավորումների և նյութերի, դիդակտիկ պարագաների ձեռքբերում, գրադարանային ֆոնդի համալրում և թարմացում** **1.2. Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում**	Համակարգիչների թիվը հանրակրթական դպրոցներում Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը 2015 թ. Համակարգչային դասարանների հիմնում Հանրակրթական դպրոցներում 1000 աշակերտի հաշվով Անվտանգ ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը-	780 110 20 58 համակարգիչ: 72	1180 110 18 67 համակարգիչ 111
1.3 Դպրոցական արհեստանոց-ների վերազինում (հաստոցներ, գործիքներ և նյութեր)	Վերազինված արհեստանոց ունեցող դպրոցների թիվ	22	0
1.4. Դպրոցական բուֆետ-ճաշարանների ստեղծում և գույքով ապահովում	Նոր բուֆետ-ճաշարաններ ունեցող դպրոցների թիվ	14	14
1.5. Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Բարեկարգված մարզադահ լիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը, 2015 թ. վերանորգված դպրոցների մարզադահլիճների թիվը:	25 %: 2	18 %: 1
1.6. Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռ Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը	43.8 % 18800 56%	47% 10508 56%
1.7. Դպրոցական գույքի նորացում, դասագրքերով աշակերտների ապահովում	Նոր սեղան-նստարաններ ունեցող դպրոցների թիվը, 2015 թ. դպրոց կապահովվի նոր կահույքով: Տարրական դասարանների աշակերտների ապահովվածու-թյունը դասագրքերով	98 72 %: 68 100 %	98 72% 58 100%

2. Ուսուցչական անձնակազմի որակավարման բարձրացում

2.1. Ուսուցիչների մասնագի-տական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացներ անցած մասնակցած ուսուցիչների թիվը- 2015 թ. վերապատրաստվող ուսուցիչների թիվը	2200 700	2200 9952

2.2 Ուսուցիչների համար համա-կարգչային դասընթացի կազմա-կերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլո-գիաների կիրառման նպատակով	Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվը 2015 թ. դասընթաց անցնող ուսուցիչների թիվը	385 160	385 160
2.3. Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը 2015 թ	128	15
3.1.Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների զարգացում	2015 թ. դպրոցական խորհրդի անդամների վերապատրաստում	114	0
3.2 Դպրոցական խորհուրդների անդամների վերապատրաստում՝ խորհրդի աշխատանքների ակտիվացման և արդյունավետու-թյան բարձրացման նպատակով	Դպրոցում իրականացվող ոչ պետական ծրագրերի նախաձեռնությունների թիվը -	50	18
3.3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման համար նպաստավոր պայմանների ստեղծում և զարգացում	Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցում սովորող աշակերտների համար ուսուցման և բուժման պայմանների բարելավում: 1 երեխայի հաշվով ներդրումների աճ:	5 %-ով	3 %
3.4. Մասնագիտական կրթության պայմանների բարելավում, տեղական աշխատաշուկայի համար անհրաժեշտ մասնագետների պատրաստում	Դպրոցական գույքը նորացվել է: Աշակերտներն ապահովված են դասագրքերով և գրենական պիտույքներով: Ձեռներեցների և կրթական հաստատությունների միջև համա-տեղ ծրագրի կազմակերպում: Մասնագիտական դասընթացների մասնակիցների թիվը	100 %-ով 2 50	100% 0 50
4.1 Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան մարզային գրադարանի և Ապարանի մշակույթի տան վերանորոգում, Աշտարակի մարզադպրոցի կառուցում:	Ավարտել 2015 թ-ին	Ավարտված է
4.2.Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	մարզային և միջհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպում Թատերական ներկայացումների թիվը մասնակիցների թիվը	50 12 5 3000	20 10 2 1250
4.3 Մշակութային ժառանգության պահպանում	Մարզում գտնվող պատմամշակութային հուշար-ձանների վերանորոգում	6	4

5.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	2015 թ. վերանորոգված մանկապարտեզների թիվը	6	6
5.2 Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիակական բազա ունեցող մանկապարտեզների թիվ	14	14
5.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվը	50 1.	50
5.4 Նախադպրոցական այլընտնաքային ծառայությունների մատուցում	3-6 կիսամյակային երեխաների նախադպրոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և լեռնային գյուղերի) ընդգրկվածության	15 %	15%

4.1.3 Խնդիրները

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում է հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցը:

Առաջնահերթ խնդիր է հանդիսանում նաև կադրերի վերապատրաստման և վերարակավորման հարցը: Մարզում առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնածրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման խնդիրները:

4.1.4 Քաղաք դասերը և հետագա քայլերը

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2015 թվականի ընթացքում կարևորվում է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը:

4.2. ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

4.2.1 Քաղաքականության վերլուծություն

2015 թվականին մշակույթի և սպորտի բնագավառում մարզպետարանի գործունեությունը նպատակաուղղվել է մարզում պետական մշակութային քաղաքականության իրականացմանը, մշակույթի դերի բարձրացմանը, պետական, ազգային և այլ տոների, ազգային ծեսերի ու ծիսակարարությունների վերականգնմանն ու տարածմանը, մշակութային ժառանգության

պահպանությանը, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը, կադրային քաղաքականության և մշակութային կրթության զարգացմանը, երիտասարդության հետ տարվող աշխատանքների աջակցմանն ու ակտիվացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպվել են ազգային, պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբելյաններ, տարելիցներ, փառատոններ, ցուցահանդեսներ, տոնախմբություններ, համերգային և թատերական ծրագրեր, սպորտային մրցումներ, հուշամրցաշարեր, առաջնություններ:

ՀՀ Արագածոտնի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման և մարզի մշակույթի բնագավառի միջնաժամկետ ծախսային ծրագրերի քաղաքականությունը շարադրող փաստաթղթերում մեծ տեղ է հատկացված պատմա-մշակույթային ժառանգության պահպանման, պատմական միջավայրի պահպանության, մշակութային կյանքի աշխուժացման, մշակույթի ոլորտի կազմակերպությունների գործունեության ընդլայնմանը, համայնքների ֆինանսական վիճակի ամրապնդմանը և մշակութային կյանքի աշխուժացմանը, մշակույթի ոլորտի նյութատեխնիկական բազայի հարստացմանը, կադրերի ուսուցման և վերապատրաստման կազմակերպմանը, մշակութային միջոցառումների թվաքանակի ավելացմանը և այլն:

Արագածոտնի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Դա լուրջ նախադրյալ է մշակութային կյանքի աշխուժացման և տուրիզմի զարգացման համար: Մարզում առկա են 1790 և ավել պատմա-մշակութային հուշարձաններ, որոնցից 1232-ը հանրապետական և 564 տեղական նշանակության:

Արագածոտնի մարզպետի նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ ավարտին են հասցվել մարզի պատմամշակութային հուշարձանների նկարահանման, հաշվառման աշխատանքները և այժմ մենք ունենք լիամետրաժ հետաքրքիր և բացառիկ փաստավավերագրական ֆիլմ:

Պարբերաբար տարվա ընթացքում մարզխորհրդի նիստերում և համայնքապետերի հետ խորհրդակցությունների ընթացքում մարզպետի կողմից տրվել են կոնկրետ հանձնարարականներ համայնքներում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, օգտագործման, շրջակա տարածքների մաքրման և բարեկարգման, սանիտարահիգենիկ վիճակի պահպանման վերաբերյալ: 2015թ. ընթացքում մարզպետի հանձնարարությամբ համայնքների բնակիչների և դպրոցների ուսուցիչների և աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել են շաբաթօրյակներ պատմության և մշակույթի հուշարձանների, նրանց տարածքների մաքրման, ճանապարհների բարեկարգման նպատակով: Աշխատանքները լինելու են շարունակական:

2015թ. ընթացքում օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների սահմաններում մարզպետի ղեկավարությամբ անցկացվել են խորհրդակցություններ համայնքապետերի, համապատասխան ծառայությունների և ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության մարզային ծառայությունների մասնագետների մասնակցությամբ՝ վերահսկողություն ապահովելու մարզի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված լիազորությունների կատարման նկատմամբ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը ղեկավարվելով «Պատմության և մշակույթի անշարժ

հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի դրույթներով և այլ իրավական ակտերով մշտական հսկողություն է իրականացնում համայնքների տարածքներում գտնվող պատմամշակութային անշարժ հուշարձանների պահպանության գոտիներում ապօրինի հողօգտագործումը կանխելու և այն պահպանելու գործում: Մարզպետի հանձնարարությամբ կրթության, մշակույթի և սպորտի, քաղաքաշինության և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը համակարգող վարչությունների աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացվում են շրջայցեր մարզի պատմամշակութային վայրեր, կատարվել են ուսումնասիրություններ հուշարձանների վիճակի, պատմական միջավայրի պահպանության ուղղությամբ:

Մարզի համայնքներում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները ու կից տարածքները հսկվում են տեղական ինքնակառավարման մարմինների, լիազորված մարմնի տարածքային ստորաբաժանման մասնագետների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների կողմից:

Պետական բյուջեի և այլ միջոցներով 2015թ. ՀՀ Արագածոտնի մարզպետի հանձնարարությամբ մշակվել, կազմակերպվել և իրականացվել է պետական, ազգային նշանակություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ: Կազմված մշակութային միջոցառումների ծրագրի շրջանակներում, ազգային և ավանդական ծեսերի վերականգնման նպատակով կազմակերպվել և իրականացվել են մշակութային միջոցառումներ, որոնցից են Բարեկենդան, Ծաղկազարդի տոն, Զատիկ, Վարդավառ, Խաչվերած և այլն: ՀՀ Արագածոտնի մարզի մշակույթի և սպորտի բաժինը 2015 թվականին մարզի հանրակրթական, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում անցկացրել է մի շարք մշակութային միջոցառումներ, որոնք նպաստել են երեխաների գեղագիտական ճաշակի զարգացմանը, հայրենասիրությանը, կոփել երեխաների միտքը:

4.2.2 Իրականացման առաջընթացը

2015թ.-ին մարզում գործում է 71 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային, 3-ը՝ քաղաքային, 65-ը՝ գյուղական, 1-ը՝ մանկական, 1-ը՝ մարզային կենտրոնական: Գործում է 2 հուշային թանգարան: 2014-2015թթ.-ներին գրադարանների այցելուների թիվը նվազել է, իսկ թանգարաններ հաճախող-ների թիվը՝ աճել:

(մարդ)

	2014թ.	2015թ.
Գրադարան այցելուների թիվ	24,055	19,704
Թանգարաններ այցելուների թիվ	4,665	5,412

Մարզում գործում է 4 մարզադպրոց՝ Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքային համայնքնե-րում և Քուչակ գյուղական համայնքում: Վերջին հինգ տարիների ընթացքում մասնակի վերանո-րոգվել են Քուչակի *(փոխվել է դահլիճի տանիքը և մասնակի՝ դահլիճի հատակը շուրջ 5 մլն դրամ)*, Ապարանի *(ներքին և արտաքին հարդարում, հատակի փոխում շուրջ 4.2 մլն դրամ)* մարզադպրոցները, իսկ Աշտարակ քաղաքում կառուցվում է նոր մարզադպրոց *(420 մլն դրամ):*

Թալինի մարզադպրոցում վերանորոգման աշխատանքներ չեն կատարվել:

Մարզադպրոցների սաները մասնակցել են հանրապետական սպորտային մրցույթ-փառատոների, Եվրոպայի և աշխարհի սպորտային մրցույթներին և ունեցել են մի շարք ձեռքբերումներ՝ Եվրոպայի ազատ ըմբշամարտի 1 մասնակից, Ազատ ըմբշամարտի մեծահասակների Հայաստանի չեմպիոն, Ազատ ըմբշամարտի պատանիների -III-րդ մրցանակակիր , Գյումրիում միջազգային մրցույթների գավաթակիր -2 հատ, Հունահռոմեական մրցաշարի II-րդ մրցանակակիր, Դինամոյի բաց առաջնության -3- հատ I-ին մրցանակակիր, Դինամոյի բաց առաջնության -2- հատ II-րդ մրցանակակիր, Դինամոյի բաց առաջնության -1- հատ III-րդ մրցանակակիր:

Նշված մարզադպրոցների վերանորոգման և ժամանակակից սպորտային գույքով կահավորման դեպքում կանխատեսվում է ինչպես մարզդպրոցներ հաճախողների թվի, այնպես էլ սպորտային մրցույթներին ձեռքբերումների աճ:

2015 թվականի հաշվետու ժամանակահատվածում մարզում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

«Հիշում եմ և պահանջում» դաս միջոցառում /հանրակրթական բոլոր դպրոցներում/, «Կարմիր սուլթան ձեռքերդ արյունոտ են» դաս-միջոցառում, «Մեծ վրիժառուն» դաս ներկայացում, «Կոչեմ ապրողաց» նկարների ցուցահանդես, «Եկել է հատուցման ժամը» թեմայով պատի թերթերի լույս ընծայում, Միջոցառում նվիրված մայրենի լեզվի օրվա առթիվ /Օշական գյուղի դպրատանը/, «Արարատ» ֆիլմի դիտում, Հայոց բանակի օր՝ հունվարի 28, Բաց դաս «Արդար հատուցում» թեմայով, 21-րդ դարը մերն է լինելու, Հովհաննես Շիրազի «Դանթեական» պոեմի ընթերցում և քննարկում, «Հիշատակի պուրակների» հիմնում, ծառատունկ /շարունակական/, Հայ ազգագրական «Պիտի գնանք վաղ թե ուշ» երգի միջոցով հայ մարդու վրեժի ու ցասման, ինչպես նաև լավատեսության և հավատի արտահայտում, Հայկական «Նեմեսիս» արդար հատուցում բաց դաս /հանրակրթական բոլոր դպրոցներում/, Ազգերի ցեղասպանությունների /Եղեռն, Սեյֆո, Հոլոքոստ, Մեգալի, Ռուանդական, Դարֆուրի բախումներ/ մասին դասեր/հանրակրթական բոլոր դպրոցներում/, «Հիշում եմ և պահանջում» պատմության վավերացում /փաստերի, լուսանկարների միջոցով/,«Արարատը իմ տարիքն է», Խաչքարի տեղադրում /Արագած համայնքում/, «Իմ պապերի հավերժական անդաստան» խորագրով միջոցառում, Գրական երաժշտական ցերեկույթ նվիրված Դանիել Վարուժանին, «Բարով եկար սիրուն կռունկ» գրական երաժշտական միջոցառում, «Պիտի գնանք վաղ թե ուշ» դաս /հանրակրթական բոլոր դպրոցներում/, Վերածնունդ հուշահամալիրում «Դու Արագած ալմաստ վահան» թեմայով միջոցառում, «Մեր գոյության արև, մեր ինքնության ոգի…» թեմայով գրական միջոցառում, Անհայտ կորած ազատամարտիկի հիշատակի օրվան նվիրված միջոցառումներ, Սփյուռքի երիտասարդների «Արի տուն» հայրենաճանաչության ծրագրի, «Նռան հատիկ-2015» թատերական մանկապատանեկան փառատոն, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70-րդ տարելիցի և Շուշիի ազատագրման 23-րդ տարեդարձին նվիրված միջոցառում, Պարի միջազգային օրվա կապակցությամբ երթ դեպի Ծիծեռնակաբերդ, «Մեր մեծերը» միջոցառում նվիրված Անդրանիկ Օզանյանի (150-ամյակ), Դանիել Վարուժանի (131-ամյակ), Համաստեղի (120-ամյակ), Փանոս Թերլեմեզյանի (150-ամյակ) և միսիոներներ-արդարների (Քարեն Եփփե, Մարիա Յակոբսեն, Բոդիլ Բյորն, Ալմա Յոհանսոն, Հեդվիգ Բյուլ և

ուրիշներ, Հունիսի 1-ին մարզում նշվել է երեխաների պաշտպանության միջազգային օրը, Անմոռուկների պատրաստում /հանրակրթական բոլոր դպրոցներում/, «Հարյուրամյա սպի» առաջին անգամ Պերճ Պռոշյանի տուն-թանգարանում ցուցադրվել է փաստաթղթեր, լուսանկարներ և եղեռնազոհ գրողների անձնական իրեր, Քայլերթ հարգանքի տուրքի մատուցում հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Խաչքարի տեղադրում /Ավան, Արագած, Թալին, Կաքավաձոր, Արագածավան, Ուշի…/ :

Աղյուսակ 3. Մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտի 2015 թվականի առաջին կիսամյանի ընթացքում արդյունքային ցուցանիշները.

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշը	Թիրախ	Փաստացի
Մշակույթի և մարզական հաստատությունների շենքերի հիմնանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	Հիմնանորոգվող մշակութային օբյեկտների թիվը Ներդուդրումների չափը	0.0	0.0
Մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպում	Մարզային մշակութային միջոցառումների կազմակերպում	3278.2 հազ. դրամ	810,0 հազ. Դրամ
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցում:	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային,փողային և լարային նվագարանների գծով ուսուցում:	21605.6 հազ. դրամ	9009.5 հազ. դրամ

2015 թվականի հաշվետու ժամանակահատվածում մարզպետի հանձնարարությամբ և աջակցությամբ մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը՝ մարզում գործող հասարակական երիտասարդական կազմակերպությունների, մարզային ֆեդերացիաների և երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոնի հետ համատեղ կազմակերպել և անցկացրել է բնակչության և երիտասարդության ֆիզիկական ակտիվությանը և առողջ ապրելակերպին նպաստող բազմաթիվ մարզական մասսայական միջոցառումներ, համայնքային, մարզային առաջնություններ և ընկերական հանդիպումներ:

Մարզում իրականացված բազմաթիվ մարզական-մասսայական միջոցառումներին, մարզային առաջնություններին և հանդիպումներին մասնակցել են բնակչության տարբեր տարիքային խմբեր՝ 10 տարեկանից մինչև 65 տարեկան:

Միջոցառումների մասնակիցների թիվը մարզում կազմում է 18 հազար կամ մարզի բնակչության ընդհանուր թվի մոտ 15,3 տոկոսը:

Կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Ազգային Ժողովի գավաթի խաղարկության մրցումներ,

ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերին մասնակցել են 85 դպրոցի 2300 աշակերտ:

Շախմատի առարկայական հանրապետական օլիմպիադայի տարածքային և մարզային մրցումներին մասնակցել են մարզի բոլոր 119 դպրոցների աշակերտական թիմերը :

Անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի Արագածոտնի մարզի ներդպրոցական փուլը

Մարզի դպրոցական թիմերը մասնակցել են ՀՀ դպրոցականների մարզական խաղերին՝ շախմատ, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, սեղանի թենիս, աթլետիկա և հանդբոլ մարզաձևերից:

Հնաբերդի տղաների վոլեյբոլի թիմը գրավել է առաջին տեղը:

Անցկացվել է հանրապետական մարզական փառատոնի մարզային մրցումները:

Անցկացվել է «ՀՀ մարզերում նախադպրոցական և դպրոցական հիմնարկներում անցկացվելիք «Սպորտլանդիա-2015» մարզական միջոցառման տարածքային և մարզային փուլերը:

ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթին մասնակցել են 135 ընտանիքներ: 12 երիտասարդ և մեկ հաշմանդամ ընտանիքներ մասնակցելու են Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար Ծաղկաձորում կազմակերպվող եզրափակիչ փուլին:

Ռազմահայրենասիրական դաստիարակության գործընթացն կազմակերպելու նպատակով «Հայոց Արծիվներ» հասարակական կազմակերպության կողմից մարզի 40 հանրակրթական դպրոցներին տրամադրվել է օդամղիչ հրացաններ: 79 հանրակրթական դպրոցներ ունեն ուսումնական զենք-զինամթերք, որից 9 դպրոցների պահանջարկը ուղարկվել է ՀՀ ԿԳՆ, իսկ 9 դպրոցների համար սպասվում է ոստիկանության եզրակացությունը: Մարզի 8 դպրոցներում աշխատանքները ընթացքի մեջ են, իսկ 14 դպրոցներ չունեն շենքային պայմաններ:

Զինկոմիսարիատների հետ համագործակցաբար անցկացվել է կցագրման աշխատանքներ: ՀՀ ԿԳ նախարարի, ՀՀ ՊՆ նախարարի և ԵԿՄ- ի կողմից համատեղ ստորագրված հուշագրի համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի հանրակրթական դպրոցներում ստեղծվել է «Երկրապահների կամավորական միության ակումբ» Ակումբի մասնակից պատանիները ակտիվորեն մասնակցել են վերապատրաստման դասընթացներին: Դասընթացների ավարտից հետո պատանիները կհանձնեն քննություն և կստանան «սերժանտ»-ի կոչում:

2015թ. մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում կազմակերպվել և իրականացվել է հանրապետական մաշտաբով սպորտային միջոցատումներ:

Կազմակերպվել և անց է կացվել «Լավագույն գյուղական մարզական համայնք>>, <<Լավագույն մարզական ընտանիք» միջոցառումները

4.1 Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում	գ. Ոսկեվազ, Սբ. Հովհաննես եկեղեցի գ. Իրինդ, Սբ. Աստվածածին եկեղեցի Զովունի բնակատեղի /Ապարանի ջրամբար/ Պողոս-Պետրոս եկեղեցի գ.Քուչակի մշակույթի տան ավարտում գ. Ծաղկահովիտի դպրոցի վերակառուցման աշխատանքներ գ.Արագածի թիվ 1 դպրոցի վերակառուցում	560639.5 հազ. դրամ
4.2.Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	մարզային և միջհամայնքային մարզական միջոցառումների կազմակերպում Թատերական ներկայացումների թիվը մասնակիցների թիվը	**27** **12** **10** **5000 մասնակից**
4.3 Մշակութային ժառանգության պահպանում	Մարզում գտնվող պատմամշակութային հուշար-ձանների վերանորոգում	**3**

4.2.3 Խնդիրները

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում է հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցը:

Առաջնահերթ խնդիր է հանդիսանում նաև կադրերի վերապատրաստման և վերաորակավորման հարցը:

4.2.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2015 թվականի ընթացքում կարևորվում է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական մշակութային և սպորտային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը:

4.3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

4.3.1 Քաղաքականության վերլուծություն

Առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ: ՄԶԾ-ում արտացոլված առողջապահության ոլորտի գերակայությունները ներառում են՝ հեռավոր գյուղական համայնքներում առողջության պահպանման առաջնային ծառայությունների բարելավում և մատչելիության բարձրացում, նեղ մասնագիտացում ունեցող բժշկական անձնակազմի և ղեկավար բուժանձնակազմի վերապատրաստում, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, վաղ ախտորոշման և լիարժեք բուժման ազգային ռազմավարության մասին հանրային իրազեկության բարձրացում, բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավում:

ՀՀ Արագածոտնի մարզում գործում են 22 բժշկական կազմակերպություններ, որոնցից 5-ը մարզպետարանի ենթակայության են, 17-ը համայնքային: Մարզի բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը 202, միջին բուժանձնակազմի թիվը՝ 573: 2014թ.-ի համեմատ բժիշկների ընդհանուր թիվը պակասել է 19 մասնագետով, իսկ բուժանձնակազմի թիվը՝ 79-ով:

ՀՀ Արագածոտնի մարզի բուժհիմնարկների 2015 թվականի գլոբալ բյուջեն կազմում 1,577,253.0 հազ.դրամ, որից ամբուլատոր ծառայության գծով 1,045,015.0 հազ.դրամ, հիվանդանոցային ծառայության գծով 532,237.2 հազ.դրամ : Այն 2014թ. համեմատ աճել է 6%, 2014թ.-ի գլոբալ բյուջեն կազմել է 1,490,541.0 հազ.դրամ: 2015 թվականի 12 ամսվա դրությամբ մարզի բուժհիմնարկների կատարողականը կազմում է մոտ 1,551,580.1 դրամ: Գլոբալ բյուջեյի հաշվարկով 11 ամիսների դրությամբ 98.4%-ով ստացել են կատարողականի գումարը:

2015թ. ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիլինիկական հաստատություններ հաճախումների թիվը կազմել է 194518, որից 66206 0-18 տարեկանների, տնային կանչերի թիվը 13676, որից 0-18 տարեկանների 8260, տնային ծնունդները 0:

2015 թվականի ընթացքում ստացիոնար բուժօգնություն և սպասարկում ստացել են 5137 հիվանդներ, որոնցից 4527 ընդգրկվել են պետական պատվերի շրջանակներ: Գրանցվել է շտապ օգնության 10380 կանչ:

Ծնունդները 2015թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ 1750, նույն ժամանակաշրջանում եղել է 1088 մահ:

2015թ.-ի ընթացքում մարզի ամբուլատոր-պոլիկլինիկ բուժհիմնարկներում գրանցվել և համապատասխան բուժում են ստացել՝ 160 պարբերական հիվանդներ, 1167 չարորակ նորագոյացություններով հիվանդներ, 1570 հոգեկան հիվանդներ, 341 էպիլեպսիայով հիվանդներ, 14 ոչ շաքարային դիաբետով հիվանդներ, 1981 շաքարային դիաբետով հիվանդներ՝ որից 443 ինսուլինակախյալ, 1538 ոչ ինսուլինակախյալ:

2015թ. ընթացքում, սահմանված ժամկետներում մարզի բուժհաստատություններին է բաշխվել ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով գնված 31756198.64 հազար դրամի և հումանիտար ճանապարհով ստացված 7747428.00 հազար դրամի դեղորայք:

ՀՀ Առողջապահության նախարարություն ուղարկվել է 22 միջնորդագրեր մարզի սոցիալապես ծանր պայմաններում գտնվող անձանց Երևանի կլինիկաներում պետական շրջանակներում անհրաժեշտ բժշկական հետազոտությունների և բուժօգնություն ստանալու համար, մարզի բուժհիմնարկներում բուժօգնություն ստանալու համար տրվել է 30 ուղեգիր՝

- Աշտարակի ԲԿ – 11
- Ապարանի ԲԿ – 8
- Թալինի ԲԿ – 7
- Ծաղկահովիտի ԲԿ – 3
- Լիլիդենտիս ստոմոտոլոգիական պոլիկլինիկա – 1

Մարզի սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող անձանց հատկացվել է 119 ուղեգիր՝

- Ջերմուկի Արարատ մանկական առողջարան - 8
- Ջերմուկ աշխարհ առողջարան – 21
- Արզնիի առողջարան – 11
- Վանաձորի ԱՍԱՐ առողջարան – 12
- Աղվերանի Գանձաղբյուր առողջարան – 67

Ծրագրեր՝

Հայկական ակնաբուժական նախագիծ բարեգործական հիվմնադրամի կողմից <<Օրանժ>> բարեգործակնա հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ 2015 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում կազմակերպվել է 3000 բնակչի հետազոտություն \որոնցից 1500 դպրոցական երեխաներ\ դուր է գրել և տրամադրելու է 50 ակոնց՝ սոցիալապես անապահով խմբին: Այդ ակնոցների շրջանակներն ու ապակիները տրամադրել է Հայկական Միջազգային Օֆթալմիկ Միությունը:

ՀԱՆ-ի Աչքի Շարժական Հիվանդանոցում կատարվել է 272 վիրահատություն, որոնցից 250-ը կատարակտի, 3-ը գլաուկոմայի և մնացածը այդ դեպքեր են՝ պտերիգումի հեռացում, ներակնային ոսպնյակի ծիածանաթաղանթային ֆիքսացիա ըստ Ա.Հովսեփյանի և այլ: Կատապրակցի դեպքերից 99% իրականացվել են ֆակոէմուլսիֆիկացիայի եղանակով: Արհեստական ոսպնյակ է դրվել 246 վիրահատության ժամանակ: Կատարվել է նաև 79 լազերային բուժում, ընդորում 13 հիվանդ ստացել է երկու աչքի լազերային բուժում, իսկ 31 հիվանդի արվել է և վիրահատություն և լազերային բուժում:

ՀԱՆ-ի հանրային ուսուցման ծրագրի շրջանակներում մարզի 9 դպրոցներում 750 դպրոցականների համար անցկացվել են թեմատիկ դասընթացներ՝ տեսողության խնամքի վերաբերյալ: Ծրագրի արժեքը կազմել է 4 միլիոն դրամ:

2015 թվականին կառուցվել է Բյուրականի բժշկական ամբուլատորիայի նոր շենքը Համաշխարհային Բանկի ԱԾԻԳ-ի կողմից՝ 66 միլիոն դրամ արժեքով:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հրատապ ծրագրի շրջանակներում իրականացվել է 4 միլիոն դրամի աշխատանքներ Ագարակի բժշկական ամբուլատորիայիում՝ փոխվել են պատուհանները, գազաֆիկացվել է, տեղադրվել է ջեռուցման համակարգ:

Ուշիի և Սասունիկի բժշկական ամբուլատորիաներին Համաշխարհային Բանկի ԱԾԻԳ-ի կողմից հատկացվել է մեկական համակարգիչ:

Ուշիի ԱԱՊԿ ձեռք բերել 420000 հումանիտար դեղորայք և բժշկական պարագաներ:

Քուչակի բժշկական ամբուլատորիայում վերանորոգվել է մայրական դպրոցի սենյակ, տեղադրվել են ճաղավանդակներ Word Wision կազմակերպության կողմից: Հումանիտար ծրագրով ձեռք է բերվել 553000 դրամի գույք և բժշկական պարագաներ:

Ծաղկահովիտի բժշկական կենտրոնում UNISEF-ի կողմից մայրական դպրոցի սենյակ 400000 դրամի ջրժեքով և էլեկտրասրտագրության ապարատ 181000 դրամ արժեքով: Ձեռք է բերվել 1385000 դրամի հումանիտար դեղորայք:

Ապարանի բժշկական կենտրոնը ձեռք է բերվել 4997000 դրամի հումանիտար դեղորայք:

Կարբիի բժշկական ամբուլատորիան ձեռք է բերել 1799790 դրամի հումանիտար դեղորայք:

Արագածի առողջության կենտրոնը ձեռք է բերել 289642 դրամի հումանիտար դեղորայք:

ՀՀ Արագածոտնի մարզի ավելի քան 1028 ընտանիքի հատկացվել է մոտ 30 միլիոն դրամական օգնություն:

Կազմակերպվել են ուսումնասիրություններ ՀՀ Արագածոտնի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ:

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում կազմակերպված մասսայական և սպորտային միջոցառումների ժամանակ կազմակերպվել է շտապ բժշկական օգնության բրիգադայի հերթապահություններ:

4.3.2 Իրականացման առաջընթացը

2015 թ-ին իրականացված միջոցառումները հետևյալն են.

Արտահիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Բարելավվել է ԱԱՊ ոլորտի որակը՝ բարձրացել է ընտանեկան բժշկների որակյալ ծառայություններից օգտվող, սկրինինգային ծրագրերի մեջ ընդգրկված բնակչության տեսակարար կշիռը, ավելացել է նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածությունը, 100% ապահովվել է առողջ երեխայի վարման ծավալը, ապահովվել է ՄՀԻՎ 100%-ով:

2. Բարձրացել է դիսպանսերային և նեղ մասնագիտական արտահիվանդանոցային բուժօգնության որակն ու մատչելիությունը՝ աճել է ներզատաբանական, ուռուցքաբանական, սրտաբանական հիվանդությունների վաղ հայտնաբերված դեպքերի տեսակարար կշիռը, գյուղական ազգաբնակչության մասնագիտական բուժօգնության սպասարկման ընդգրկվածությունը, բարձրացել է հղիների վաղ ընդգրկումը նախածննդյան հսկողության մեջ:

3. Նվազել է անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի թիվը:

4. Բարձրացել է գյուղական համայնքներում արտագնա լաբորատոր-ախտորաշիչ այցելությունների թիվը:

Հիվանդանոցային բուժօգնության գծով.

1. Իրականացվել է մոր և մանկան առողջության ծառայությունների բարելավում, որի արդյունքում բացառվել է տվյալ ժամանակահատվածում մայրական մահացությունը, իսկ պերինատալ մահացության ցուցանիշը նվազեցման միտում է ցուցաբերել:

2. Բարելավվել է երեխաների հիվանդանոցային բուժօգնության որակը, կապված մանկական հավաստագրերի ներդրման գործընթացի հետ:

3. Բարելավվել են հիվանդանոցային բուժօգնության որակի ցուցանիշները՝ նկատվում է մահաբերության ցուցանիշի նվազեցում, պլանային վիրաբուժության ակտիվության բարձրացում:

4. Մարզի բոլոր ԲՄԿ, որոնք ընդգրկված էին ԱԱՊ ոլորտի բարեփոխումների ծրագրի մեջ, հագեցվել են ժամանակակից բուժսարքավորումներով և պարագաներով:

5. Շարունակվել է մարզի բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավումը՝ ՀԲ կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում <<ընտանեկան բժիշկ>> մասնագիտացում են ստանում մարզի ԱԱՊ ոլորտում աշխատող բժիշկներ, իսկ նույն ծրագրի շրջանակներում <<ընտանեկան և համայնքային բուժքույր>> մասնագիտացում բուժքույրեր: ՀՀ Առողջապահության նախարարության և ՀՀ Արագածոտնի մարզպետարանի համագործակցության արդյունքում ժամանակավոր մարզ են գործուղվել վիրաբուժ, անեստեզիոլոգ: Պարբերաբար թարմացվում է բժիշկ-մասնագետների թափուր հաստիքների

բազան:

Աղյուսակ 4. Առողջապահության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
Ռազմավարական նպատակ 1. **Բժշկական արդյունավետություն բարձրացում**			
Ծրագիր 1 *Արտահիվանդանոցային բուժօգնության որակի բարելավում* *1.1 Մարզում առողջության առաջնային պահպանման որակի և մատչելիության բարձրացում՝ ամբողջ մարզի տարածքում ընտանեկան բժշկի ինստիտուտի կայացում*	Ընտանեկան բժիշկների որակյալ ծառայություններից օգտվող բնակչության տեսակարար կշիռը ազգային օրացույցին համապատասխան՝ ըստ տարիքային խմբերի, ազգաբնակչության ընդգրկվածությունը պատվաստումներում • սկրինինգային ծրագրերի՝ /զարկերակային ճնշման չափում, կրծքագեղձի, արգանդի վզիկի, շագանա-կագեղձի/ ազգաբնակչության ընդգրկվածություն ըստ տարիքի • առողջ երեխային վարման ծավալի ապահովում • ՄՀԻՎ ապահովում ամբուլատոր պայմաններում • նորածինների կրծքով սնուցման ընդգրկվածութուն • Ընտանեկան բժշկի կողմից առողջ ապրելակերպի քարոզչություն	70 % 85-90 % 80-90% 100% 100% 90%	67 % 89 % 83% 100% 100% 88%
1. 2 Արտահիվանդանոցային դիսպանսերային և նեղ մասնագիտական բուժօգնության որակի և մատչելիության բարձրացում /էնդոկրինոլոգիական, ինֆեկցիոն, հոգեբուժական, սրտաբանական, փուբերկուլյոզային, մաշկավեներաբանական, արյունաբանական, մանկաբարձգինեկոլոգիական/ ամբողջովին ընդգրկելով մարզի տարածքի գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող ազգաբնակչությանը	ա/էնդոկրինոլոգիական ծառայության գծով՝ կոմատոզ վիճակով հոսպիտալիզացիայի ցուցանիշի նվազում դիաբետով հաշվառված հիվանդների առաջնակի հաշմանդամության մակարդակի իջեցում բ/գլյուկոմետրիայի կատարման մակարդակի ապահովում գ/ուռուցքաբանական՝ վաղ հայտնաբերված հիվանդների թիվը ընդհանուրի մեջ /գյուղերում և քաղաքներում դիսպանսերային սպասարկման մեջ ընդգրկված ազգաբնակչության հավասար տեսակարար կշիռ	K=0 10% 100% 60-70% 11,65%	K=0 15,4% 100% 53% 6,3%/16,6%
1. 3 Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի որակի և մատչելիության բարձրացում	- անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովվող ազգաբնակչության շրջանում մերժված դեպքերի նվազում	0	0

1.4Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների որակի և մատչելիության բարձրացում մարզի ամբողջ ազգաբնակչության համար	ա/ ախտորոշիչ մասնագետների համատեղելիության գործակիցը դարձնել բ/ գյուղական համայնքներում արտագնա ախտորոշիչ այցելությունների հաճախականության բարձրացում	0 2	0 1.6
1.5 Արտահիվանդանոցային բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում	Արտահիվանդանոցային բուժ. օգնության գծով ծառայությունների մատուցում	855119.6 մլն դրամ	Արդյունք-ները կամփոփ-վեն տարե-վերջին
Ծրագիր 2 **Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավում** *2.1. մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավում* *2.2 մանկական հավաստագրերի ներդրման գործընթաց*	ա/ պերինատալ մահացության ցուցանիշի նվազում բ/ մայրական մահացության բացակայություն	10 պր 0	8.5 պր 0
2.3 Երկրորդ մակարդակի հիվանդանոցային ծառայության որակի և մատչելիության բարելավում *2.4 Մանկական հավաստագրերի ներդրման գործընթացի մոնիտորինգ*	ա/ հիվանդի բուժման միջին տևողության նվազում /մահճ.-օր/ բ/պլանային և անհետաձգելի վիրաբուժության համաչափ զարգացում գ/ կլինիկական և ախտաբանաանատոմիա-կան ախտորոշումների չհամընկնելու հաճախա-կանության նվազում դ/ օնկոլոգիական ախտորոշումով հիվանդ-ների պարբերական բուժման արդյունավետու-թյան բարձրացում /5-ամյա ապրելիության ցուցանիշի բարձրացում/	8-10 50%/ /50% 0 50%	7-9 35% / /65% 0 50%
2.5 Հիվանդանոցային բուժ. օգնության գծով մատուցված ծառայությունների որակի ապահովում	Հիվանդանոցային բուժ. օգնության գծով ծառայությունների մատուցում	477896.3 մլն դրամ	Արդյունք-ները կամփո-փվեն տարե-վերջին
Ռազմավարական նպատակ 2 **Բժշկական հաստատությունների ռեսուրսների բարելավում**			
Ծրագիր 1 Բուժհաստատությունների կադրային ռեսուրսների բարելավում	«Աշտարակի», «Թալինի»,«Ապարանի» և «Ծաղկահովիտի» ԲԿ- ի ապահովում կլինիկական օրդինատուրայի միջոցով մասնագիտացում անցած մասնագետներով /նյարդաբան, ընտան. բժիշկ/ ապահովում ԲՄԿ-րում աշխատող 94 բուժքույրերի վերապատրաստում	20 մլն դրամ	Շարու-նակվում է
Ծրագիր 2 Շտապ օգնության ծառայության որակի բարելավում	Շտապ օգնության ծառայության մեքենաների թարմացում՝3 գծային շտապ օգնության մեքենա և 1 ռեանիմոբիլ	4	**4**

4.3.3 Խնդիրները

Բժշկական արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը դա արտահիվանդանոցային բուժօգնության բարելավումն է: Թիրախային ցուցանիշ՝ ընտանեկան բժշկի ծառայություններից օգտվող բնակչության 70% չի ապահովվել՝ հիմնականում համապատասխան մասնագետների բացակայության պատճառով: Աշտարակի,Թալինի,Ապարանի և Ծաղկահովիտի ԲԿ ԱԱՊ ոլորտի բժշկները, աշխատում են թաղամասային սկզբունքով, այսինք՝ թերապևտներ և մանկաբույժներ:

Դեռևս դժվար է ապահովել նեղ մասնագիտական և դիսպանսերային բուժօգնության մեջ գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող բնակչության համար հավասար ընդգրկվածության ցուցանիշ:

Անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման գործընթացի թիրախային ցուցանիշը ապահովվել է սակայն այս գործընթացի որակը ապահովելու համար անհրաժեշտ է տրամադրվող դեղորայքի ցանկը վերանայել, ընդգրկելով արդի խմբերի դեղորայք:

Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման առումով անհրաժեշտ է՝ նվազեցնել պերինատալ մահացության և հիվանդանոցային մահաբերության ցուցանիշները, համաչափ զարգացնել պլանային և անհետաձգելի վիրաբուժությունը:

Մարզի ամբուլատոր համակարգն հիմնականում ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով: *Հիվանդանոցային ծառայությունը կարիք ունի մի շարք մասնագետների՝ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, բիթ-կոկորդ-ականջաբան, նյարդաբան, համաճարակաբան, ակնաբույժ, էնդոկրինոլոգ, մանկաբույժ, մանկաբարձ-գինեկոլոգ, վիրահատող մանկաբարձ-գինեկոլոգ:*

Մարզում առկա է 21 շտապ օգնության մեքենա, որից 1-ը՝ ռեանոմոբիլ, 3-ը՝ «Ֆորդ-տրանզիտ», 10-ը՝ «Գազել», 5-ը՝ «ՈՒԱԶ», 1-ը «Ֆոլկսվագեն»: *Մարզին անհրաժեշտ է 1 ռեանոմոբիլ և 10 շտապօգնության մեքենաներ:*

4.3.4 Քաղաք դասերը և հետագա քայլերը

Ընտանեկան բժշկության ինստիտուտի կայացմանը մարզի ամբողջ տարածքում կնպաստի մարզային բժիշկների մասնագիտացման նոր մոդելի ներդրումը, այն մաքսիմալ կերպով իրականացնել՝ առանց հիմնական աշխատանքային գործընթացի ընդհատման: ԱԱՊ բնագավառում իմունոկանխարգելման թիրախային ցուցանիշների ապահովման համար ստեղծվել է մարզային համակարգող հանձնաժողով:

Գյուղական ազգաբնակչության նեղ մասնագիտական բուժօգնության մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է մշակել ֆինանսավորման և մոնիտորինգի նոր մոդելներ՝ այն է ֆինանսավորումը պետք է իրականացվի նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բուժհաստատության, իսկ մոնիտորինգը՝ԱԱՊ տարածքային կենտրոնի միջոցով: Անհրաժեշտ է գյուղական ԱԱՊԿ-ի ֆինանսավորման ծավալները հաշվարկել անհատական, հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Անվճար և արտոնյալ պայմաններում տրամադրվող դեղերի ցանկը ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել համագործակցություն այն համայնքների հետ, որոնք բժշկական ծրագրեր իրականացնելու համար նախատեսել են ֆինանսական միջոցներ, ինչը կնպաստի այդ միջոցների նպատակային օգտագործմանը:

Պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցման համար անհրաժեշտ է հագեցնել առնվազն երկու բժշկական կենտրոն նորագույն վերակենդանացման սարքավորումներով, ձեռք բերել համապատասխան սանիտարական ավտոտրանսպորտ, իրականացնել կադրերի կրթում:

<<Տուբերկուլոզի դեմ պայքարի>> նպատակային ծրագրի շրջանակներում կշարունակվի ԱԱՊ ոլորտում գործող բժիշկների և բուժքույրերի կրթումը:

ՀՀ առողջապահության նախարարության ԾԻԳ-ի կողմից <<Շտապ օգնության արդիականացում>> և <<Մանկական հիվանդանոցային բուժօգնության բարելավում>> վարկային ծրագրերի շրջանակներում կշարունակվի նշված օղակներում աշխատող անձնակազմի շարունակական վերապատրաստումը և ուսուցումը:

4.4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.4.1 Քաղաքականության վերլուծություն

Մարզի զարգացման գերակա նպատակներից է սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացումը: Այն կարող է իրագործվել առաջին հերթին ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման միասնական համակարգի անցման,սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացման, սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնման, այդ կապակցության սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման միջոցով:

Զբաղվածության ինչպես ակտիվ, այնպես էլ պասիվ քաղաքականության նպատակը գործազուրկների սոցիալական ապահովությունն է: Եթե պասիվ քաղաքականությունն ենթադրում է գործազրկության նպաստների հատկացում, ապա ակտիվ քաղաքականության միջոցով փորձ է կատարվում հավասարակշռել աշխատանքի առաջարկը և պահանջարկը: Շուկայական տնտեսության պայմաններում աշխատաշուկայի քաղաքականությունը սոցիալական քաղաքականության կարևոր մաս է կազմում: Մարզում կապիտալի պակասի և ներդրումների ցածր մակարդակի արդյունք հանդիսացող գործազրկության պայմաններում տարբեր ոլորտների միասնական քաղաքականության իրականացմամբ է պայմանավորված զբաղվածության հիմնախնդիրների լուծման արդյունավետության բարձրացումը և գործազրկության նվազեցումը:

Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների բնագավառում ծառայությունների տրամադրումը ուղղված է հաշմանդամների վերականգնման և պրոթեզաորթոպեդիկ օգնության ու ծառայությունների մատուցման կազմակերպման բարելավմանը, որը կնպաստի հասարակության մեջ նրանց ինտեգրմանը: Վերականգնման արդյունքում նրանք հնարավորություն ունեն աշխատելու՝ մասամբ հոգալու իրենց, ինչպես նաև՝ իրենց ընտանիքի սոցիալական խնդիրները, որն այսօր մեր երկրի սոցիալական քաղաքականության և աղքատության հաղթահարման ծրագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015 թթ. Ռազմավարության» պահանջներից է:

Բնակչության իրավունքների պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների ընդլայնումը:

Նշված միջոցառումների իրականացման համար ակնկալվում է պետության և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

4.4.2 Իրականացման առաջընթացը

Մարզում բնակվում են 18,552 կենսաթոշակառուներ, 8,373-ը՝ հաշմանդամներ, 331-ը՝ զոհված ազատամարտիկների և 11 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 635-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն, բռնի տեղահանվածներ՝ 36:

Մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սոցիալական աջակցության նպատակով նախատեսված 30 մլն դրամ ֆինանսական միջոցները Արագածոտնի մարզպետի որոշումներով տրամադրվել է մարզի 114 համայնքների 939 ընտանիքների:

Արագածոտնի մարզում խոցելի խմբերի 2015թ. վիճակագրական տվյալները

	Վիճակագրական տվյալներ	
1	Նպաստառու ընտանիքներ	**5689**
2	Կենսաթոշակառուներ	**18552**
3	Առաջին կարգի հաշմանդամ	412
4	Երկրորդ կարգի հաշմանդամ	3762
5	Երրորդ կարգի հաշմանդամ	3800
6	Մանկուց հաշմանդամ երեխաներ	399
	Ընդամենը հաշմանդամ	**8373**
7	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ մինչև 18 տարեկան-	9
8	Միակողմանի ծնողազուրկ երեխաներ	723
9	Գրանցված գործազուրկներ	3265
10	Աշխատանք փնտրողներ	4546
11	Զոհված ազատամարտիկներ	231
12	Աշխատանքի տեղավորվածներ	367
13	Վիրավոր ազատամարտիկներ	198
14	Փախստական ընտանիքներ	635
15	Բնակ. կարիք ունեց. փախստ. ընտանիքներ	99
16	Բնակ. կարիք ունեց.զոհվ.և վիր. Զինծառ.	55

2015 թ. ըստ տարածաշրջանների խոցելի խմբերի պակերը հետևյալն է.

	Աշտա-ռակ	**Ապա-ռան**	**Թալին**	**Արա-գած**	**Ընդա-մենը մարզում**
ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը 2014թ.	**2735**	**732**	**1468**	**601**	**5536**
ընտանեկան նպաստ ստացող ընտանիք. թիվը 2015թ.	**2818**	**777**	**1456**	**638**	**5689**
գրանցված գործազուրկների թիվը 2014թ.	**1387**	**178**	**340**	**384**	**2289**
գրանցված գործազուրկների թիվը 2015թ.	**1823**	**501**	**466**	**475**	**3265**

Մարզում բնակվում են 18552 կենսաթոշակառուներ, **231**զոհված և **198** վիրավոր ազատամարտիկների ընտանիքներ, **635** փախստական ընտանիքներ՝ **1 551** անձով: 1988թ.-1994թ. Ադրբեջանից բռնագաղթված և մարզում բնակություն հաստատած կարիքավոր փախստական ընտանիքների համար 2001-2007 թթ. ընթացքում միջազգային կազմակերպությունների կողմից կառուցվել են **152** քոթեջներ՝ **287** բնակարաններով և 2 բազմաբնակարան շենք՝ 40 բնակարանով: Մարզում բնավող, փախստականի կարգավիճակ բնակարանի կարիք ունեցող անձանց թիվը ճշտվել է և ՀՀ կառավարություն է ներկայացվել **99** ընտանիքի ցուցակ:

ՀՀ օրենսդրության կատարելագործման վերաբերյալ ՀՀ կառավարություն է ներկայացվել 5 առաջարկություն:

2015 թ-ի ընթացքում մարզպետարան է դիմել բնակարանի բարելավման և բնակարանի կարիք ունեցող մարզի զոհված և վիրավոր ևս 2 ազատամարտիկների ընտանիք:

Նախապատրաստվել և ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության Միգրացիոն պետական ծառայություն է ներկայացվել ՌԴ մուտք գործելու արգելքը հանելու մարզպետի 472 միջնորդագիր:

Զբաղվածության կարգավորման ամենամյա ծրագրով ՀՀ կառավարություն ի ներկայացվել մարզի 1590 հողօգտագործողների ցուցակը:

2015 թ. մարզում աղքատության ընտանեկան նպաստ է ստանում **5689** ընտանիք: Միանվագ դրամական օգնություն է ստացել 1887 ընտանիք:

Ավանդների փոխհատուցման գումար է տրվել 125 ընտանիքների/29,9մլն դրամ/:

2015թ. մարզի 280 դպրոցահասակ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ իրենց ամառային հանգիստը անցկացրել են Ծաղկաձորի <<Աղբյուր>> ճամբարում:

Միջազգային բարեգործական կազմակերպությունների օժանդակությամբ իրականացվել է 11 ծրագիր/3200 շահառուներ /: Փյունիկ, Սատար,Շողիկ, Հանգրվան Պոակ-ից և այլ բարեգործական կազմակերպություններից բերվել է 50 ականջակալ՝ ծեր և հաշմանդամ քաղաքացիներին տրամադրվելու համար; Կարիքավորներին կտրամադրվի 60 հատ հենակ, 700 սոցիալապես անապահով ընտանիքների հատկացվել է նոր և օգտագործված հագուստ:

2015 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզում կա կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 1144 երեխա: Նրանցից 7-ը առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ են, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք՝ 17, 672-ը՝ միակողմանի ծնողազուրկներ են, 393-ը՝ հաշմանդամություն ունեցողներ, 21-ը՝ առանձնահատուկ կրթության կարիք ունեցողներ: Կիսամյակի ընթացքում վկայագրվել են 28 երեխաներ, ովքեր սովորում են հատուկ գիշերօթիկ դպրոցներում: Գնահատվել են 264 երեխաների սոցիալհոգեբանական կարիքները,որից 127-ի համար մշակվել են անհատական վերականգնողական ծրագրեր:Նրանցից 81-ի մասին տվյալները մուտքագրվել են <<Նորք>> տեղեկատվական համակարգ: Բացահայտվել է կրթությունից դուրս մնացած և առանձնահատուկ կրթության կարիք ունեցող 2 երեխա, իսկ 10 երեխա առողջական ծանր խնդիրների պատճառով չեն կարող հաճախել դպրոց: Աշխատանքներ են տարվում նրանց առողջական և կրթական խնդիրների լուծման ուղղությամբ:Կարևորելով հանրակրթական դպրոցները ներառական դարձնելու խնդիրը,ՎՎ-ի և բաժնի համագործակցությամբ Ապարանի տարածաշրջանի դպրոցների տնօրենների հետ իրազեկման հանդիպում է կազմակերպվել, որին մասնակցել է նաև Երևանի բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի ներկայացուցիչը:

Ոստիկանությունում հաշվառման մեջ են գտնվում 15 իրավախախտ անչափահասներ, որոնց նկատմամբ խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից նշանակվել են հասարակական դաստիարակներ: Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերման,նրանց հետ կապված խնդիրների լուծման, աշխատանքների միասնական

կազմակերպման նպատակով կառավարության 2014 թվականի թիվ 303-Ն որոշման համաձայն մարզի 4 տարածաշրջաններում ոստիկանության հետ համատեղ ստեղծվել են միջգերատեսչական հանձնաժողովներ,ձևավորվել է մարզային հանձնաժողով, անցկացվել է մեկ նիստ:

ՀՀ 6 քաղաքացի հաշվառվել է որպես որդեգրողի թեկնածու, տրվել է եզրակացություն 1 երեխայի մանկատնից կենսաբանական ընտանիք վերադարձնելու համար:

Ընդհանուր իրավասության դատարանին է տրամադրվել 6 եզրակացություն ամուսնալուծության պատճառով երեխաների խնամքն ու դաստիարակությունը ծնողներից մեկին հանձնելու վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատությամբ աճել է մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնակցությունը երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ հարցեր քննարկող դատական և խնամակալության ու հոգաբարձության հանձնաժողովների նիստերին:

Այս ժամանակահատվածում ծննդյան վկայական չունեցող 1 երեխա ստացել է ծննդյան վկայական՝ժամկետի բացթողումով:

Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ մարզի համայնքներում կազմակերպվել են միջոցառումներ,որոնց մասնակցել են շուրջ 3000 երեխաներ,ստացել նվերներ :

Մարզի 10 համայնքներում իրականացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մշտադիտարկում, բաժանվել են մեթոդական նյութեր:

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ընտանիքներում բռնության կանխարգելման թեմաներով կազմակերպվել են 10 հանդիպումներ, կլոր սեղաններ, դպրոցներում բաց դասեր կանանց իրավունքների վերաբերյալ իրավական ակտերի ներկայացում, նախագծերի քննարկումներ: Բռնության ենթարկված 1 կին մանկահասակ թոռնիկի հետ ուղղորդվել է <<Լայթհաուս>>, 4 կին՝<<Կանանց իրավունքների կենտրոն>> կազմակերպության գրասենյակ, որը մարզում բացվել է այս տարվա հունիս ամսից :

Երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով բաժնի աշխատակիցները մասնակցել են կյանքի դժվար իրավիճակում գտնվող 8 դեպքերի քննարկումների: Այդ հարցերում համագործակցել ենք ‘‘Վորդ Վիժն’’-ի Թալինի և Ապարանի գրասենյակների հետ:

ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի N356 որոշման համաձայն մշակվել և մարզպետի կողմից հաստատվել է ընտանիքի տարվա կապակցությամբ իրականացվելիք մարզային միջոցառումների ծրագիրը: Արագածոտնի մարզի համայնքներում կազմակերպվել են <<Հայկական ավանդական հարսանիք>> խորագրով տոնական միջոցառումներ: Ընտանիքի տարվան նվիրված մարզային ծրագրի շրջանակներում մարզպետի կողմից նյութական աջակցություն են ստացել 35 բազմազավակ, բնակարանային խնդիրներ ունեցող 4 ընտանիքներ: Հասարակական, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությամբ մեծարվել են հեղինակություն վայելող 10 ընտանիքներ, 1 ընտանիքում նշվել է ոսկե հարսանիք: Ընտանիքի օրվա կապակցությամբ բաժնի աշխատակիցների և <<Վորլդ Վիժն Ինթերնեշնլ-Հայաստան>> կազմակերպության մարզային աշխատակիցների հետ այցելություններ են կազմակերպվել դժվարին վիճակում գտնվող 12 ընտանիքներ, որոնց կցուցաբերվի նյութական աջակցություն: Նախապատրաստվել է Իրինդ համայնքից բազմազավակ մայր Լարսա Մարկոսյանի և նար ընտանիքի անդամներ վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, որը ներկայացվել է ՀՀ ԱՍՀ նախարարություն: Նա մասնակցել է ՀՀ նախագահի մոտ ընդունելության, պարգևատրվել առաջին անգամ հանձնվող ‘‘Ծնողական փառք’’ մեդալով: Տարբեր միջազգային, տեղական ՀԿ-ների հետ համագործակցության արդյունքում նյութական աջակցություն են ստացել 390 երեխաներ և նրանց ընտանիքները: Մարզում այս տարվա առաջին կիսամյակում երեխաների աջակցության և կանխարգելման

ծրագրեր են իրականացրել <<Վորլդ Վիժն Ինթերնեշնլ>>, <<Շողիկ>>, <<ԱՌԴԱ>>, <<Global Aid Network>>, <<Մանուկների հիմնադրամ>> բարեգործական կազմակերպությունները:

Աղյուսակ 5. Սոցիալական և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

h/h	Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
1	***Ռազմավարական նպատակ 1.*** **Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը մարզում**			
	Ծրագիր 1. Սոցիալական ծառայության ազդեցության բարձրացում տարբեր սոցիալական խմբերի վրա	Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան	60%	60%
		2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճան	60%	60%
		3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը	58%	60%
		4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը	50%	40%
		5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը	60%	50%
2	***Ռազմավարական նպատակ 2.*** **Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում**			
	Ծրագիր 2.1 . Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական և ոչ պետական /համակարգչային գույքով,տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը,	100%	75%
		Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը,	100%	100%

3	***Ռազմավարական նպատակ 3.*** **Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական ,մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին և նրանց ընտանիքներին**			
	Ծրագիր 3.1.Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում	Մարզում դժվարին իրավիճակում հայտված երեխաների թիվ	1286	1286, տվյալները մշտապես թարմաց-վում են
	Ծրագիր 3.2. Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվ	925	38
4	***Ռազմավարական նպատակ 4.*** **Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում**			
	Ծրագիր 4.1. Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամքը, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	17	Կիրակա-նացվի 2-րդ կիսամյա-կում
	Ծրագիր 4.2. Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը,	120	Իրականաց-վում է
	Ծրագիր 4.3 Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	25	Կիրակա-նացվի 2-րդ կիսամյա-կում
	Ծրագիր 4.4. Մարզում կյանքի դժվար իրավիճակներում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին ծառայությունների մատուցման որակի բարձրացում, քանակի ավելացում, հաստատությունների ստեղծում	1. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների բացահայտման և նրանց սոցիալհոգեբանական կարիքների գնահատման աճ	114 համայնք	Աշխատանք ներն ընթանում են
		2. ԿԴԻԳ երեխաների բացահայտման վերաբերյալ ուղղորդում ներկայացնող կառույցների թվի մեծացում	240	258
		3.Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված երեխաների թվի աճ	10%-ով	5 %-ով

		4.Մարզի խնամակալության և հոգաբարձության մարմիններում երեխաների և ընտանիքի պաշտպանության ոլորտով զբաղվող առանձին աշխատողների առկայություն:	30	0
		5. ԿԴԻԳ երեխաների և նրանց ընտանիքներին աջակցող պետական և հասարակական կազ-մակերպությունների հետ համատեղ միջոցառումների թվի աճ :	8	4
	Ծրագիր 4.5. Հաշմանդամներին /հատկապես հաշմանդամ երեխաներին և նրանց ծնողներին/ վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ միջոցներ ստացած հաշմանդամների թիվը	313	150
	Ծրագիր 4.6. Հաշմադամ երեխաների առողջավերա-կանգնողական ցերեկային կենտրոնի ստեղծում	Կենտրոնի ծառայությունից օգտվող հաշմանդամ երեխաների թիվը	70	0
	Ծրագիր 4.7. Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	1. Հաշվառված խնամատար ընտանիքների թիվ	16	1
		2. Խնամատար ընտանիքնե-րում տեղավորված ծնո-ղազուրկ երեխաների թիվը	8	1
	Ծրագիր 4.8. Գործազուրկների համար մասնագիտական վերապատրաստման միջոցառումների կազմակերպում	1. Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը,	40	45
		2. նրանցից աշխատանքի տեղավորվածներ՝	25	45
		ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը՝	750	82
		բ/ Աշխատանք փնտրող անձանց սոցիալ-տնտեսական ժամանակավոր բարելավում		
	Ռազմավարական նպատակ 5. **բարելավում**	**Սոցիալական սպասարկման համակարգի կառավարմնան**		
	Ծրագիր 5.1.ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-երի միջև տեղեկա-տվության փոխանակման, մարզի մակարդակով իրկանա-ցվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմ-ների մշակում և ներդրում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	12	15

	Ծրագիր 5.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	4	2
	Ծրագիր 5.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	4.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	50 %	40 %
	Ծրագիր 5.4. Մարզային երիտասարդական կենտրոնի զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	15	15
	Ծրագիր 5.5.Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպություն-ների /պետական, հասարակա-կան, միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում, տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումներ	4	2
		Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության թիվը,	**100%**	**100 %**
		Հասարակական կարծիքի հարցումերով սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում	**10%**	**20 %**
	Ռազմավարական նպատակ 6. **Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կարողությունների բարձրացում**			
	Ծրագիր 6.1. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում /դասընթացներ, արտասահմանյան փորձ և այլն/	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը	**2**	**10**
		Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը	**2**	**15**

	Ծրագիր 6.2. Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների /պետական և ոչ պետական/ կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը /մարզպետարան և ՍԾՏԳ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ /	**30**	**10**

4.4.3. Խնդիրները

Կատարված աշխատանքների վերլուծությունը փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքի արդյունքում զգալի թվով մարդիկ օգտվել են տարբեր սոցիալական ծրագրերից, սոցիալական ոլորտում առկա է որոշակի դրական տեղաշարժ, սակայն անհրաժեշտ է, որպեսզի հիմնախնդիրների լուծումը և միջոցառումների իրագործումը կրեն շարունակական կատարելագործման բնույթ:

Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների, ինչպես նաև միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը:

Ներկա պայմաններում անհրաժեշտ է, որպեսզի արտացոլված կարևորագույն հիմնախնդիրները և միջոցառումների իրագործումը ետին պլան չմղվի, կրի շարունակական կատարելագործման բնույթ և հաշվի առնվի նաև տարածքային առանձնահատկությունները:

Երիտասարդների գործազրկությունը լուրջ խնդիր է ՀՀ Արագածոտնի մարզում: Իրավիճակն ավելի է բարդանում աշխատանք փնտրող երիտասարդների մասնագիտական ցածր կրթության մակարդակի և հմտությունների մակարդակի բարձրացման, նրանց ցանկության կամ հնարավորության բացակայության բերումով: Տեղեկատվական առկա բազան թույլ չի տալիս մոնիտորինգի ենթարկել ուսուցման համակարգը, աշխատանքի շուկան և նրանց մինչև գոյություն ունեցող կապերը, կանխատեսել աշխատանքի շուկայի կողմից պահանջվող հմտությունները և հետևաբար ուսուցման կարիքները:

Մարզում դեռևս հիմնախնդիր է մնում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների համար նախատեսված ցերեկային խնամքի կենտրոնների չգործելը, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող բոլոր պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցությունը, համայնքներում սոցիալական աշխատողների բացակայությունը:

4.4.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Մասնագիտական կրթությունը և ուսուցումը ոչ միշտ են զբաղվածության երաշխիք հանդիսանում: Զբաղվածության քաղաքականության այլ միջոցառումներին զուգահեռ, անհրաժեշտ է ուսուցումը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը պետք է ներդաշնակեցվի տնտեսության նոր պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումների ընդհանուր շրջանակների հետ: Դեռևս հստակ դիրքորոշում չի ձևավորվել առ այն, թե ուսուցման ինչպիսի կարիքներ պետք է բավարարեն կամ ինչպիսի հմտություններ պետք է ձեռք բերվեն, որպեսզի պատշաճ կերպով հասցեագրվեն տնտեսության կարիքները և առավելագույնի հասցվեն մասնագիտական

հաստատությունների շրջանավարտներին և գործազուրկների հնարավորությունները աշխատանք գտնելու ուղղությամբ:

Հետագայում նույնպես հետևողական աշխատանքներ պետք է տարվեն սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացամ ուղղությամբ:

Մարզում չեն գործում երեխաների ցերեկային խնամքի կենտրոններ, հասարակական կազմակերպությունների կողից իրականացվող ծրագրերը այդ շրջանակներում կրում են ժամանակավոր բնույթ:Այդ բնագավառում կարևորվում է պետական հովանավորչության հարցը, որպեսզի ստեղծվեն երեխաների ցերեկային խնամքի կենտրոններ:

5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

5.1 Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Արագածոտնի մարզում 2015թ. ՄԶԾ կարևորագույն նպատակներից է գյուղատնտեսության գործունեության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորման և կատարելագործման միջոցով ավելացնել բուսաբուծական և անասնապահական մթերքների ծավալները, բարձրացնել արտադրության արդյունավետությունը, լուծել իրացման խնդիրները, որի արդյունքում կավելանա գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կկրճատվի աղքատությունը գյուղական բնակավայրերում:

2015 թ-ին միջոցառումները հիմնականում ուղղվել են ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման, հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման բնագավառներին անասնապահության և դաշտավարության զարգացման ծրագրերում աջակցելու գործընթացներին:

Մարզում կարևորում է նաև հացահատիկի սերմարտադրության, սերմաթարմացման և սորտափորձարկմանն ուղղված միջոցառումները, որոնց ուղղությամբ աշխատանքներ տարվում են, նախատեսվում է նաև գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավում:

5.2 Իրականացման առաջընթացը

Մարզում ընդհանուր ցանքը 2015թ.-ի կազմել է 40702 հա՝ նախորդ տարվա 37991 հա դիմաց (հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները աճել են 2302 հա-ով, բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները 305 հա-ով, կարտոֆիլի ցանքատարածությունները 107 հա-ով: 2015թ.-ի մարզում բերքատու պտղի և հատապտղի տարածությունը կազմել է 6617 հա:

2015թ.-ի ցանքատարածությունների աճին զուգընթաց արձանագրվել է հացահատիկի և հատիկաընդեղենի, բանջարեղենի, կարտոֆիլի, պտղի և հատապտղի, խաղողի բերքի աճ:

<u>Գյուղատնտեսության աջակցման և ռեսուրսների զարգացման ծրագրեր</u>. 2015թ.-ի գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում համայնքների 880 շահառուների կողմից վճարվել և ձեռք է բերվել 175.0 տ. գարնանացան գարու, 5.0 տ. առվույտի և 43.2 տ. կորնգանի սերմացուներ, որոնցով կատարվել է համապատասխանաբար 875 հա գարու, 200 հա առվույտի և 288 հա կորնգանի ցանք (պահանջարկը բավարարված է):

2015թ.-ի աշնանը հատկացվել է 300 տոննա առաջին վերարտադրության աշնանացան

ցորենի սերմացու,այն տրվել է 36 համայնքների 390 շահառուների և կատարվել է 1000 հա ցանքս: 2015թ.-ի աշնանացանի համար մարզին նախատեսված 300 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացուից համայնքներին է հատկացվել ՌԴ ներկրված 235 տոննա սերմացու:Պահանջարկը ամբողջությամբ բավարարվել է:

Պետական աջակցության ծրագրով 2015թ.-ին մարզին հատկացվել և ներկրվել է

- ազոտական պարարտանյութ - 3500 տոննա (ներկրվել է 3301 տոննա)
- կալիումական պարարտանյութ - 115 տոննա (ներկրվել է 55.75 տոննա)
- ֆոսֆորական պարարտանյութ - 150 տոննա (ներկրվել է 28.5 տոննա)
- դիզելային վառելանյութ – 1000000 լիտր դիզ. վառելանյութ (ներկրվել է 313506 լիտր,:

Գյուղացիական տնտեսությունների կողմից ներկայացված վճարունակ պահանջարկն ամբողջությամբ բավարարվել է:

04.11.2015թ. դրությամբ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 262 տոննա բանջարեղեն, 412 տոննա պտուղ՝ նախորդ տարի նույն ժամանակահատվածում մթերվել է 409 տոննա բանջարեղեն և 422 տոննա պտուղ :

2015թ.-ին ՀՀ կառավարության կողմից մարզի 94 համայնքների շուրջ 3348 սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվեց օժանդակություն՝ անվճար սերմացուի տեսքով: Շուրջ 305.3 տոննա գարնանացան գարու, 25.22 տոննա առվույտի և 6.4 տոննա կորնգանի սերմացուներ են բաժանվել մարզի համայնքների սոցիալապես անապահով ընտանիքներին:
Առավել վարակված 3000 հեկտար վարելահողերում և բազմամյա տնկարկներում մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով մարզին անհատույց տրամադրվել է 240կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի մկնասպան թունանյութ:Այն բաշխվել է մարզի 11 համայնքների:

Մարզի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է անասնապահությունը: Այստեղ կենտրոնացված է հանրապետության խոշոր եղջերավոր անասունների շուրջ 12.6%-ը (86.7 հազար գլուխ տավար, որից 41.5 հազարը՝ կովեր), ոչխարների և այծերի՝ 13.2%-ը (98.3 հազար գլուխ) և խոզերի՝ 7.5%-ը (10.7 հազար գլուխ): 01.01.2015թ.-ի դրությամբ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 1.7%-ով, իսկ ոչխարների ու այծերի գլխաքանակը՝ 1.6%-ով:

Մարզում «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում ընդգրկվել է 12 համայնք՝ Ավան, Աշնակ, Ներքին Սասնաշեն, Թաթուլ, Ագարակավան, Վերին Սասնաշեն, Վերին Բազմաբերդ, Բերքառատ, Գեղաձոր, Նորաշեն, Լեռնապար, Հնաբերդ, որից 2 համայնքում՝ Գեղաձոր և Լեռնապար արոտների ջրարբիացման աշխատանքներ նախատեսված չէ, իսկ 9 համայնքում արոտների ջրարբիացման աշխատանքներն ավարտվել են: Գյուղտեխնիկայի տրամադրման աշխատանքներն ավարտվել են 7-ում՝ բացի Ագարակավան, Վերին Սասնաշեն, Վերին Բազմաբերդ, Լեռնապար, Հնաբերդ համայնքներից: Ներկայում վերը նշված համայնքների գյուղտեխնիկայի տրամադրման աշխատանքներն ընթացքի մեջ են և ծրագիրը ավարտելու համար նախատեսվում է տրամադրել 8 միավոր գյուղտեխնիկա:

12 համայնքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- կառուցվել է 22.1 կմ ջրարբիացման համակարգ, տեղադրվել է 34 հատ խմոց, որով ջրար-

բիացվել է ավելի քան 17,000 հա արոտ: Նշված բոլոր շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է շուրջ **380.7 մլն դրամ:**

- լրացուցիչ խոտի արտադրման նպատակով համայնքներում ստեղծված կոոպերատիվներին տրամադրվել է 115 միավոր գյուղտեխնիկա, որից 13 միավոր տրակտոր և 102 միավոր այլ գյուղգործիքներ: Տրամադրված գյուղտեխնիկայի ընդհանուր գումարը կազմել է շուրջ **483.6 մլն դրամ:**

Ջրարբիացման համակարգերի կառուցման լիարժեք օգտագործելի են դարձել ոչ միայն նախկինում մասնակիորեն օգտագործվող շուրջ 10,000 հա արոտներ, այլև կենդանիների խմելու ջրի բացակայության պատճառով ընդհանրապես չօգտագործվող շուրջ 7,000 հա արոտավայրեր՝ յուրաքանչյուր հա-ից միջին հաշվարկով ստանալով 1.6 տոննա խոտի չոր զանգված՝ համաձայն ընդհանուր կերարտադրության դրույթների և անասնաբուծական նորմատիվների: Արդյունքում՝ նշված տարածքից ապահովվում է շուրջ 4,600 տոննա կերամիավոր, որից ստացվում է շուրջ 5,750 տոննա կաթ՝ շուրջ 632.5 մլն դրամ կամ 767 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 767 մլն դրամի:

Կոոպերատիվներին գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում՝ խոտհարքներից մսուրային շրջանի համար հավաքվել է տարեկան հավելյալ շուրջ 3,800 տոննա չոր խոտ, որը հավասարազոր է 1,558 տոննա կերամիավորի, որից ստացվում է մոտ 1,950 տոննա կաթ՝ շուրջ 292.5 մլն դրամ կամ 260 տոննա քաշաճ (միս)՝ շուրջ 260.0 մլն դրամի:

Ծրագրի շրջանակներում իրականացված ջրարբիացման աշխատանքների և գյուղտեխնիկայի տրամադրման արդյունքում ստացվում է միջինում տարեկան շուրջ 975.5 մլն դրամ եկամուտ: Համեմատելով մարզում կատարված ընդամենը ներդրումները՝ 864.4 մլն դրամ կամ շուրջ 1.8 հազար ԱՄՆ դոլար, ստացվում է, որ յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլար ներդրումն ապահովել է տարեկան շուրջ 1.12 ԱՄՆ դոլար լրացուցիչ եկամուտ:

Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների պարբերական մոնիտորինգի արդյունքում գրանցվել է կաթնատվության 17% աճ և շուրջ 22% քաշաճ:

Մարզի 12 համայնքում անասնապահության զարգացման համար հատկացված բյուջեն կազմում է **1,016.0 մլն դրամ**, որից **506.7 մլն դրամ** ջրարբիացման համակարգի կառուցման և **509.3 մլն դրամ** գյուղտեխնիկայի տրամադրման նպատակով (այդ համայնքներում անասնապահությամբ զբաղվող ծրագրի շահառուների թիվը կազմում է շուրջ 2,600 ֆերմերային տնտեսություն):

2015թ.-ի փետրվարից մեկնարկել է երկրորդ ծրագիրը, որի տևողությունն է 5 տարի և կավարտվի 31.05.2020թ.-ին:

Երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արագածոտնի մարզից ընդգրկել 12 համայնք: Նախատեսված 12 համայնքից 5-ում (Օրգով, Արտաշավան, Արայի, Մաստարա, Թալին) արդեն իսկ մեկնարկել են երկրորդ ծրագրի նախապատրաստական աշխատանքները:

Չնայած մարզում հաշվառված է 1320 տրակտոր, 177 հացահատիկահավաք կոմբայն, 584 տրակտորային կցասայլ, 132 տրակտորային խոտհնձիչ, 45 կերահավաք կոմբայն, 163 հավաքիչ-մամլիչ և այլ գյուղատնտեսական տեխնիկա, սակայն դրանց սարքինության մակարդակը՝ միջինը շուրջ 76.0%՝ հանրապետական միջինի՝ 79.3%-ի համեմատ :

«ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման ու հավաքակազմի աստիճանաբար նորացման աշխատանքների իրականացում» ՀՀ կառավարության 2013թ.-ի գերակա խնդրի լուծ-

ման շրջանակներում 13.06.2013թ. թիվ 588-Ն և 20.06.2013թ. թիվ 650-Ն որոշումների հիման վրա Բելառուսի Հանրապետությունից ներկրվել է «Բելառուս 82.1» մակնիշի տրակտորներ, որոնց իրացումն իրականացնում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը (լիզինգային եղանակով): 2014թ.-ին ձեռք է բերվել 1 անիվավոր տրակտոր, 2015թ.-ին 1 անիվավոր տրակտոր և 1 հացահատիկահավաք կոմբայն: Մարզի համայնքների գյուղատնտեսական տեխնիկայի նորացումը հետևողականորեն շարունակվում է:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

/հեկտար/

	2014	2015	2015թ. 2014թ-ի նկատմամբ,
Հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսեր	26261	28563	2302
Տեխնիկական մշակաբույսեր	22	27	6
Կարտոֆիլ	1622	1729	107
Բանջարանոցային մշակաբույսեր	1035	1340	305
Բոստանային մշակաբույսեր	182	233	51
Կերային մշակաբույսեր	8869	9043	174
Ընդամենը ցանքային տարածությունը	**37991**	**40702**	**2711**

Ըստ աշխատանքային պլանի իրականացվել են անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքներ: Ստեղծված մարզային հանձնաժողովի կողմից ընտրանքային եղանակով ճշգրտվել են առկա գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը:

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳԼԽԱՔԱՆԱԿԸ
(01.07.2015թ. դրությամբ)

/գլուխ/

	2014	2015	2015թ. 2014թ-ի նկատմամբ
Խոշոր եղջերավոր անասուններ	85263	86502	+1239
Կովեր	40350	40425	+75
Խոզեր	10521	11262	+741
Ոչխարներ և այծեր	99212	100065	+853
Թռչուններ	336344	339344	+3000
Մեղվաընտանիքներ	15727	15735	+8

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՐՔԻՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ
(01.07.2015թ. դրությամբ)

Ցուցանիշի անվանումը	Տողի համարը	Առկայությունը	Որից՝ սարքին վիճակում	Սարքինության տոկոսը
1	2	3	4	5
Տրակտորներ, ընդամենը	001	1320	950	72
Բեռնատար ավտոմեքենաներ	002	1182	880	74.5
Հացահատիկահավաք կոմբայներ բոլոր մակնիշների	003	177	119	67.2
Տրակտորային կցասայլակներ	004	584	490	84
Տրակտորային խոտհնձիչներ	005	132	98	74.2
Կերահավաք կոմբայններ՝ ներառյալ սիլոսահավաք	006	45	33	73.3
Կարտոֆիլահավաք կոմբայններ	007	-	-	-
Մամլիչ-բարդոձիչներ	008	163	122	74.8
Հատիկազտիչ մեքենաներ	009	42	33	78.5
Տրակտորային շարքացաններ	010	201	133	66.2
Տրակտորային գութաններ	011	356	286	80.3
Կուլտիվատորներ	012	266	233	87.6

ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ՝ ԸՍՏ ՋՕԸ-ԵՐԻ
(01.07.2015թ. դրությամբ)

ՋՕԸ	Հասույթ /մլն ՀՀ դրամ/	Գանձում /մլն ՀՀ դրամ/	Գանձման %
1.Փարպի	15	12	80
2.Աշտարակ	36	27	75
3.Քասախ	34	22	64,7
4.Շամիրամ	28,644	19,32	67,4

5.Ապարան	0	0	0
6.Թալին	63,5	35,7	56
Ընդամենը՝	**177,144**	**116,02**	**65,5**

Մարզում զգալիորեն բարելավվել են խորհրդատվական աշխատանքները: Տարբեր դոնորների հետ ֆինանսական աջակցությամբ ուսուցումներ և խորհրդատվական աշխատանքներ են կազմակերպվել մարզպետարանի, ԳԱՄԿ-ի, ՓՄՁ-ՀԱԿ-ի և հասարակական կազմակերպությունների կողմից,այդ աշխատանքները շարունակական են:

Աղյուսակ 6. Գյուղատնտեսության ոլորտի արդյունքային ցուցանիշները.

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	**Արդյունքային ցուցանիշներ**	**Թիրախ**	**Փաստացի**
***Ռազմավարական նպատակ 1.* Ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրությունը, նվազեցնել ազգաբնակչության աղքատությունը:**			
Ծրագիր 1. Ավելացնել գյուղատնտեսության նհամախառն արտադրանքը	Գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճ	7%	0
	Խաղողի համախառն բերքը	13000 հազ. տ.	0
	Պտղի համախառն բերք	65.0 հազ. տոն	30. հազ. տոն
	Կարտոֆիլի համախառն բերքի աճ	10 %-ով	Արդյունքները կամփոփվեն տարեվերջին
	Կարտոֆիլի բերքատվությունը	240 g/հա	
	Հացահատիկի և հատիկաընդեղենի համախառն բերքի աճ	25%-ով	
	ա. հացահատիկի	22g	
	բ. հատիկաընդեղենի	40g	
	Կաթի արտադրությունը,	84.7 հազ. տ.	51.0 հազ. տոն.
	(Բարձրացնել կաթի արտադրության ծավալները	2%-ով	2%-ով
	Մեկ կովի կաթնատվությունը	2450կգ	0
	Բարձրացնել կաթնատվությունը	5%- ով	5%- ով
	Մսի արտադրություն (սպանդային քաշով)	15.2հազ.տ.	5հազ.տ.
	/Բարձրացնել մսի արտադրության ծավալները	1%-ով	1%-ով
	9. Ընդհանուր անասնագլխա-քանակ (պայմանական)	67000 գլուխ	67675գլուխ
	10. Կաթի ապրանքայնության բարձրացում	10%-ով	5 %-ով
	11. Մսի ապրանքայնություն, %	100%	100%

Ծրագիր 2. Բարձրացնել հողօգտագործման արդյունավետությունը	2.1 Օգտագործվող վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի մակերեսը	65000 հա	66866.8 հա
	2.2 Չօգտագործվող վարելահողերի տարածքը	6228.7 հա	6228.7 հա
	2.3 Ոռոգելի մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը	27500 հա	27565.3 հա
	2.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատ-ուժի տեսակարար կշիռը	60%	63%
	2.5. Պոմպակայանների վերակառուցում մարզի համայնքներում	2	2
	2.6. Երրորդ կարգի ջրանցքների վերականգնում	12 հատ	12 հատ
	2.7. Ոռոգման ջրատարների և ջրհան կայանների նորոգում	4 հատ	4 հատ
	2.8.Խաղողի և պտղի բերքատվության բարձրացում ծրագրի իրականացման վայրերում	10%-ով	Արդյունքները կամփոփվեն տարեվերջին
	2.9.Բաշխված պտղատուտնկիների քանակը	300000 (հատ)	250000 (հատ)
	2.10.Ծրագրի շահառուների թիվը	200	180
	2.11.Խաղողի և պտղի տարածությունը	6783.5 հա	6641.6 հա
	2.12.Խաղողի և պտղի տնկանյու-թի որակից գյուղացիական տնտեսությունների բավարվածության աստիճան՝	0.85	0.8
	2.13.Անբավարար կարտոֆիլի տնկանյութի մատակարարում	120տ	130տ
Ծրագիր 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1 Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը,	27600 հա	27565.3 հա
	Մարզում ընդարձակել ոռոգելի հողերի տարածությունը	2000 հեկտարով	2100 հեկտարով

	3.2 Մարզում վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը	3.0 կմ	28.1 կմ
	Ներդրում. 2015 թ-ին –ՀՀ պետբյուջե,	2377.3 մլն դրամ	Շարունակվում է
	դոնորներ՝	5.6 մլն. դրամ	3.5 մլն. դրամ
	3.3 Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը,	40%	40%
	3.4 Ոռոգման ջրի կորուստների տեսակարար կշիռը,	40%	40%
	3.5 ՋՕԸ-երին ոռոգման աշխատանքների կազմակերպման համար ՀՀ պետ. բյուջեից հատկացումների չափը,	190 մլն. դրամ	Գումարը բաշխվում է համաձայն ծրագրի
Ծրագիր 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	4.2 Մսի արտադրության ծավալները,	19.0 հազ. տոննա	6.0 հազ. տոննա
	4.3 Կաթի իրացման ծավալները,	40.0 հազ.տոննա	29. 0 հազ.տոննա
	4.4 Մսի իրացման ծավալները,	19.0 հազ. տոննա	6. 0 հազ. տոննա
	4.5 Բրդի իրացման ծավալները,	210տ	80տ
	4.6 Ձվի իրացման ծավալները,	23.0 մլն հատ	13. 0 մլն հատ
	4.7 Արհեստականորեն սերմնավորված խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը,	1000 գլուխ	1100 գլուխ
	4.8 Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխա-քանակը,	1182 հազ. գլուխ	197084 գլուխ
	4.9.Ներդրում. կիսամյակային (պետ.բյուջե)	30 մլն դրամ	Ներդրումներն իրականացնում է ՀՀ գյուղնա-խարարությունը
Ծրագիր 5. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1 Գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թիվը	5	5
	5.2 Առևտրային կազմակերպությունների թիվը	10	10
	5.3 Գյուղացիական տնտեսությունների թիվը	38800	38800. 0

	5.4 Սառնարանային տնտեսությունների թիվը	3	3
	5.5 Սպանդանոցների թիվը	2	2
	5.6 Կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի թիվը	5	9
	5.7 Մսի և մսամթերքների վերամշակման կետերի թիվը	2	2
Ծրագիր 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1 Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների/ ձեռնարկությունների թիվը	2100	1076
Ծրագիր 7. Գյուղատնտեսական ենթակառուցվածքների բարելավում	7.1. Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների թիվը	1250	1270
	7.2. Սառնարանների տարողունակությունը	20000-50000 կգ	35000 կգ
	7.3. Կաթի ընդունման և նախնական վերամշակման կետերի տարողունակությունը, (ընդամենը՝ 9 կաթի կետ)	4500	3300
	7.4. Փոքր սպանդանոցների տարողունակությունը, կգ, մեկ օրում (ընդամենը՝ 1 արտոնագրված սպանդանոց)	1500	1500
	7.5. Ոռոգվող հողերի մակերեսի աճ նախորդ տարվա նկատմամբ	1. 5%	1. 5%
	որից՝ մեխանիկական	10%	10%
	ինքնահոս	10%	10%
Ծրագիր 8. Գյուղատնտեսության բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատչելիության աճ	8.1.Ուսուցողա-խորհրդատվական ծառայություններից օգտվող ֆերմերների տեսակարար կշիռը,	8%	12%
	8.2.2015 թ. ուսուցողական-խորհրդատվական ծառայություններից օգտվող ֆերմերների թիվը	1550	4550

5.3 Խնդիրները

<u>Մարզում դեռևս օրախնդիր է մնում հակակարկտային կայանքների ցանցի ընդլայնումը:</u> Ամեն տարի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները կազմում են շուրջ 39-41 հազար հեկտար, որոնք գտնվում են ռիսկային գոտիներում: Ամբողջ վեգետացիայի ընթացքում դիտվում են անընդհատ կարկտահարություններ, որի պատճառով գյուղացիական տնտեսություններին պատճառվում է զգալի վնաս: Մարզում առկա են 63 հակակարկտային

կայանքներ, որոնք պաշտպանում են շուրջ 4,500 հա: Ընդհանուր առմամբ առաջնային անհրաժեշտ է առնվազն 20 *հակակարկտային կայանքի ձեռք բերում (հակակարկտային կայանքների համար անհրաժեշտ է շուրջ 80.0 մլն դրամ):*

Աշխատանքային պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքում առաջացած ամենամեծ խոչընդոտը կիսամյակի ընթացքում միջին ցուցանիշներից ավելի երկարատև տեղումներն էին և պարբերաբար կրկնվող կարկտահարությունները: Համաձայն կազմված մասնագիտական ակտերի, մարզի **17** համայնք 2015 թ, կրել է **1.75** միլիարդ դրամի վնաս:

Ոլորտում մարզի առաջնահերթ խնդիրներն են.

1) Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության ցածր մակարդակը
2) Վերամշակող արտադրամասերի ստեղծումը
3) Հացահատիկային մշակաբույսերի որակյալ և կոնդիկցիոն սերմերով ապահովվածությունը
4) Մարզում սպանդանոցի և համակցված կերերի արտադրամասերի հիմնումը
5) Մարզի բոլոր համայնքներում հակակարկտային համակարգերի տեղադրումը
6) Գյուղատնտեսական մթերքների իրացումը:

5.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Պետք է հետևողականորեն շարունակվեն վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների կերարտադրության, արհեստական սերմնավորման, կաթնարտադրության խթանման, հացահատիկային կուլտուրաների սերմարտադրության, սորտաթարմացման բնագավառներին, անասնապահության և դաշտավարության զարգացմանն աջակցելու գործընթացները:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1 Քաղաքականության վերլուծություն

Մարզում կա բնական պաշարների շահագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացման, անտառազանգվածների պահպանման ու աստիճանական վերականգման խնդիր:

Պարբերաբար կատարվում են ուսումնասիրություններ ընդերք շահագործող տնտեսվարող սուբյեկտների կողմից օրինականությունների պահպանման դրվածքը գնահատելու, խախտումները բացահայտելու և կանխելու համար; Մարզում առկա **93** ընդերքշահագործող կազմակերպություններից 2015 թվականի դրությամբ գործում է **50**-ը:

ՀՀ Արագածոտնի մարզի օգտակար հանածոներն են հիմնականում տուֆերը, անդեզիտա-բազալտը, պեռլիտային ավազը և խարամը, իսկ մետաղական հանածոները՝ ոսկի-բազմամետաղ (Թուխմանուկի ոսկու հանքավայրը): Արագածոտնի մարզի հանքավայրերը շահագործվում են թվով 38 կազմակերպությունների կողմից: Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում:

Անտառազանգվածը կազմում է 11110 հա, որից մաքուր անտառ 5215 հա: Անցած տարիների ընթացքում անտառատնկման մասսայական աշխատանքներ չեն կատարվել և չեն վերացվել նախկին տարիների ծառահատումների միջոցով հասցված վնասները:

Ծառատնկումները հիմնականում կատարվում են հասարակական նախաձեռնությամբ և միջազգային կազմակերպությունների նվիրատվությամբ, որը չի կարող հիմնովին լուծել հիմնախնդիրը: «Հայանտառ» ՊՈԱԿ «Արագածոտնի անտառտնեսություն» մասնաճյուղի հաշվեկշռում առկա է **10874.2** հա հողատարածք, որից անտառածածկ է **5215** հա-ը:

6.2 Իրականացման առաջընթացը

2015 թվականի ընթացքում Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Լուսագյուղ և Արայի համայնքներում գերմանական GIZ կազմակերպության կողմից էռոզացված հողերում կատարվում են անտառհիմնման աշխատանքներ: Արայի համայնքում հատկացվել է 50 հա հողատարածք, որից ցանկապատվել է 44 հեկտարը:Անտառ է հիմնվել 18 հա տարածությունների վրա:

Լուսագյուղ համայնքում հիմնվել է 4 հա անտառ: 3000թ/մ –ի վրա հիմնվել է տնկարան:

Քուչակ համայնքնում անտառհիմնման համար ընտրվել է 40 հա տարածություն: Համայնքի հետ ակտիվ աշխատանք է տարվում իրազեկության բարձրացման և ծրագրին բնակչության մասնակցությունը ապահովելու համար:

Հնաբերդ համայնքում լճի շրջակայքում անտառհիմնման համար 25 հա տարածություն է ընտրվել,որտեղ կարվեն բիոինժեներական միջոցառումներ և հողի էռոզիայի կանխարգելման և նվազեցման աշխատանքներ:

Ծրագիրն ունի շարունակական բնույթ:

Սասունիկ համայնքում գործող աղբավայրը փակվել է: Աղբավայրը անհարմարություններ էր ստեղծում միջմարզային ավտոճանապարհի և շրջակա հողատարածքների համար: Նոր աղբավայրի համար հատկացվել է 8 հա հողատարածք: Ռեկուլտիվացիոն աշխատանքներից հետո հին աղբավայրի տեղում կհիմնվեն այգիներ:

Աղյուսակ 7. Բնապահպանության ոլորտի արդյունքային ցուցանիշները

հ/հ	Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
	Ռազմավարական նպատակ. Բարելավել բնապահպանական իրավիճակը Արագածոտնի մարզում			
	Ծրագիր 1. Բնապահպանական միջոցառումների իրականացում	Վերականգնվող անտառների տարածքը - հա	7.7	0
		Բարելավված ճանապարհների երկարությունը	160 կմ	Ընթացքի մեջ է
		Բարելավված արոտավայրերի և խոտհարքների մակերեսը	2400 հա	Ընթացքի մեջ է
		Արոտավայրեր, որոնք ունեն ջրարբիացման կետեր,	1000 հա	Ընթացքի մեջ է

		Տեղադրված ջրարբիացման կետեր	22 հատ	Ընթացքի մեջ է
		Արոտավայրերի մակերեսը, որոնք ունեն ջրարբիացման կետեր	1050 հա	Ընթացքի մեջ է
		Վերանորոգված դաշտամիջյան ճանապարհների երկարությունը,	160 կմ	Ընթացքի մեջ է
		Տեղադրված ջրհահեռացման խողովակների և ջրի հոսքը մեղմող գաբիոնների քանակը	120 հատ	Ընթացքի մեջ է
		Արոտավայրերի քանակը և մակերեսը, որոնք ունեն կառավարման պլաններ	16 հատ 1050 հա	Ընթացքի մեջ է
		Արոտավայրերի կառավարման պլաններ մշակած համայնքների թիվը	13	Ընթացքի մեջ է
	Ծրագիր 2. Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում	Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ	13	Ընթացքի մեջ է
		Մարզի համայնքներում աղբավայրերի կառավարման պլանի մշակում, գործող աղբավայրերի ցանկապատում	13 համայնք	Ընթացքի մեջ է
		Աղբավայրեր որոնք ցանկապատվել են	8	2
		Միջհամյանքային աղբավայրերի մշակված նախագծեր	4 հատ	2
		Կազմակերպել աղբահեռացման միջհամայնքային կազմակերպություն	4 հատ	2
		Համայնքներ, որոնք ունեն աղբա-հեռացման պայմանագրեր	14	2
	Ծրագիր 3. Խախտված հողերի վերականգնում	Քարհանքների ռեկուլտիվացիա	1 հա	0
		Մելիորացված հողեր,	1 հա	0

6.3 Խնդիրները

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները մեծ չափով առկա են նաև Սյունիքի մարզում: Դրանք են՝ անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարումը, կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրները, ջրային

ռեսուրսների արդյունավետ կառավարումը, օգտագործումը, հողերի դեգրադացիայի կանխումը, անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը, մարգագետինների բարելավումը և արդյունավետ օգտագործումը:

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու, շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության և կառավարման խնդիրները լուծելու նպատակով նախատեսվել է աշխատանքներ տանել հետևյալ ոլորտներում՝

1) Անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում
2) Կենցաղային աղբի հեռացման և արդյունաբերական վտանգավոր թափոնների կառավարման խնդիրների կառավարում
3) Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում
4) Հողերի դեգրադացիայի կանխումը և անապատացմանը նպաստող անտրոպոգեն գործոնների նվազեցումը
5) Մարգագետինների և արոտավայրերի բարելավում և արդյունավետ օգտագործում:

6.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Անտառներով համեմատաբար ոչ հարուստ Արագածոտնում մի կողմից առկա են հարուստ և գեղատեսիլ անտառներ, իսկ մյուս կողմից՝ հանքային պաշարներով՝ քարերով և այլ շինանյութերով հարուստ ընդերքը հանքարդյունահանվում է, որը սոցիալ-տնտեսական դրական հետևանքների հետ մեկտեղ մարզում առաջացրել է բնապահպանական բազում խնդիրներ:

Գործող հանքարդյունաբերությանը զուգահեռ իրականացվում է նաև հանքային պաշարների հետազոտություն և գնահատում, որը կարող է մարզի տարածքում փոխել հանքարդյունաբերության աշխարհագրությունը:

Կարևոր է համայնքների, հասարակության լայն շերտերի մասնակցությունը բնապահպանության հարցերում: Այստեղ համայնքների, հասարակության և պետության փոխհամաձայնեցված, ներդաշնակ գործունեությունը կարող է ապահովվել միայն տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության լայն խավերի, հասարակական կազմակերպությունների ակտիվ ներգրավման միջոցով: Օրենսդրական բավարար բազա կա /ՀՀ Սահմանադրություն, ՀՀ միջազգային պայմանագրեր, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, ՀՀ օրենսգրքեր և այլն/, հասարակությանը նույնպես այս գործընթացներում ներգրավելու համար և այդ ներգրավվածությունը որոշակի չափով առկա է, սակայն այն բավարար համարել չի կարելի, քանզի ակնկալվում է ավելի մեծ մասնակցություն այս խնդիրներին: Ինչ-որ տեղ հասարակության անբավարարար մասնակցությունն այստեղ հենց մարդկանց մի ստվար հատվածի կրավորական դիրքորոշման արդյունք է:

2015 թվականին շեշտադրում կկատարվի մարզի հատկապես հանքարդյունաբերական և բնապահպանական ռազմավարությունների համադրման և փոխլրացման մեխանիզմների մշակման վրա:

6.5 Հողաշինության եվ հողօգտագործման բնագավառ

Հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության կողմից 2016 թ. հունավարի 1-ի դրությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ.

2015 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի 21 համայնքներից ստացվել է տարբեր կատեգորիաների հողատեսքերի փոփոխության վերաբերյալ 26 հողաշինարարական գործ, որից 23 ստացել է միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը,

մնացած 3 դեռևս գտնվում են աշխատանքային փուլում: Դրական եզրակացություն ստացած 5 հողաշինարարական գործերը հանդիսանում են քաղաքացիների սեփականություն:

4.4749 հա նպատակային նշանակության փոփոխության արդյունքում համայնքների բյուջե է մուտաքագրվել հողամասի կադաստրային արժեքների գումար՝ 32073064 ՀՀ դրամ:

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից վարձակալության է տրամադրվել 88.7 հա հողատարածք 1565620 ՀՀ դրամ վարձավճարով:

Համայնքային սեփականության հողերից աճուրդ վաճառքով օտարվել է 74.5988 հա հողատարածք, որի արդյունքում համայնքների բյուջե է մուտքագրվել 46812614 ՀՀ դրամ:

Պետական սեփականություն հանդիսացող հողատարածքներից մարզպետի համաձայնեցմամբ վարձակալության է տրամադրվել 5382 հա 9166600 ՀՀ դրամ վարձավճարով:

7. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

7.1. Քաղաքականության վերլուծություն

Մարզում տուրիզմը թերևս թույլ է զարգացած, պատճառը տուրիզմի հիմնական ենթակառուցվածքների բացակայությունն է և մարզի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրությունը: Անհրաժեշտ է իրականացնել մարզի զբոսաշրջության վարկանիշը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ՝ ստեղծել մարզը ներկայացնող եռալեզու բուկլետ, մշակել մարզի տուրիստական պոտենցիալը ներկայացնող տուր-փաթեթներ և դրանք առաջադրել տուրիստական միջազգային կազմակերպություններին:

Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը հետաքրքիր առավելություն է ներկայացնում գյուղական տուրիզմի զարգացման համար: Էկոլոգիապես մաքուր և համային բարձր արժեքներով օժտված գյուղատնտեսական մթերքները առանձնակի նշանակություն ունեն տուրիզմի տեսանկյունից, որը կարող է դառնալ տուրիստների սպասարկման կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը:

Տուրիզմի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ինչպես համապատասխան տարածքներում հյուրանոցային հարմարությունների և հյուրընկալական տների սակավությունը, կենցաղային ոչ բավարար պայմաններով, այնպես էլ ճանապարհների անբարեկարգ վիճակն ու տրանսպորտի բացակայությունը:

Ոլորտում ՄԶԾ-ով նախատեսված է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ այցելուների կենտրոնի ստեղծում, հենակետային տուրիստական կենտրոնների առանձնացում և դրանց շուրջ ենթակառուցվածքների (ավտոկանգառներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ) ստեղծում, ամենամյա կազմակերպվող Բերքի, Խաղողօրհնեքի, և Զատկի տոնակատարությունների ընդլայնում, գիդերի, տուր-օպերատորների, ուղեկցողների, «Մահճակալ և նախաճաշ» հյուրընկալական տների տերերի, սպասարկման ոլորտի աշխատողների համար ուսուցման, հեծանվավազքի, ձկնորսության միջոցառումների կազմակերպում, ըստ թեմատիկ երթուղիների քարտեզների կազմել և հրատարակում, մարզի տուրիստական ինտերնետային կայքի ստեղծում, տեսարժան վայրերը տանող ճանապարհի երկարությամբ մարզի տեսարժան

վայրերի նկարների, հուշանվերների կրպակներ տեղադրում, փոքրիկ սրճարանների կառուցում և մարզի գովազդը արտաքին և ներքին տուրիստական շուկաներում կազմակերպում:

7.2. Իրականացման առաջընթացը

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է համագործակցությունը նախկինում հաստատված կապերով, այդ թվում՝ Բելառուսի Հանրապետության Գոմելի մարզի, Իրանի Իսլամական Հանրապետության, ՌԴ Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի մարզերի հետ ինչպես մարզում տուրիզմը զարգացնելու, այնպես էլ նոր տնտեսական կապեր հաստատելու և մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող համատեղ ծրագրեր իրականացնելու նպատակով:

Զբոսաշրջության զարգացման գործում կարևորվում է մարզում առկա հոյակերտ եկեղեցիների պատմամշակութային հուշարձանների դերը: Հանրապետության այցելուների և տուրիզմի ամենահետաքրքիր վայրերից է՝ Հայոց պատմության գրեթե բոլոր ժամանակներին բնորոշ մեծ թվով պատմական հուշարձաններ: Լավ պահպանված են կիկլոպյան ամրոցներ, մ.թ.ա. 3-1-ին հազարամյակի բնակատեղի (Գեղարոտ), Ուրարտական ամրոցներ (Հնաբերդ, Ծաղկահովիտ), Արշակունյաց թագավորների դամբարանը Աղձքում (4-րդ դար), Ագարակի, Ավանի, Քասաղի, Փարպիի բազիլիկները (5-րդ դար), Հովհանավանքը (5-8-րդ դար), Օշականում Մ. Մաշտոցի դամբարանի վրա կառուցված եկեղեցին (5-րդ դար), Սաղմոսավանքը, (13-18-րդ դարեր), Տեղերի վանքը (13-15-րդ դարեր) Աստվածընկալ վանքը (13-15 րդ դարեր), Շենիկի (5-7-րդ դարեր), Մաստարայի (6-րդ դար), Գառնահովիտի (6-7-րդ դար), Ներքին Սասնաշենի եկեղեցիները, Քրիստափորի վանքը (7-րդ դար), Աշտարակի կամուրջը (17-րդ դար), Աշտարակի Ականատեսի առուն (ուրարտական ժամանակաշրջան):

Քրիստոնեությունը, որպես Հայաստանի պատմության անբաժանելի մաս, կարող է զբոսաշրջային գրավիչ ուղղություն դառնալ: Կրոնական տուրիզմը զբոսաշրջային ոլորտի ամենագրավիչ ճյուղերից է, այն կոչված է ոչ միայն օտարերկրացիներին ծանոթացնել երկրի պատմամշակութային արժեքներին, այլև ինչ-որ իմաստով այդ արժեքների կրողն ու տարածողը դարձնել:

Զբոսաշրջության առումով մարզն առավել գրավիչ դարձնելու նպատակով իրականացվում են մարզի տեսարժան վայրերի, պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների գովազդման աշխատանքներ ինչպես մարզպետարանի պաշտոնական կայքով, այնպես էլ տուրիստական գործակալությունների միջոցով:

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի և Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության ծրագրի համագործակցությամբ աշխատանքներ են իրականացվում Հայաստանի զբոսաշրջային նոր կայք (www.armenia.travel) ստեղծելու ուղղությամբ՝ Հայաստանի վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային զբոսաշրջային շուկայում պատշաճ ներկայացնելու նպատակով:

2015 թվականի ընթացքում մարզպետարանի կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը : Ծրագրի 10-րդ գլխում ներկայացված է Արագածոտնի մարզում դեռևս չզարգացած, սակայն զարգացման ներուժ և հեռանկար ունեցող զբոսաշրջության ոլորտը: Այստեղ կարևորվել է մարզի համար զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակումը, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: 2015-2018թթ. ընթացքում պլանավորվել է մասնավոր ներդրողների միջոցներով մարզում իրականացնել մի շարք ծրագրեր:

ՄԶԾ-ով 2015թ. ոլորտի կարիքների գնահատումը այլ աղբյուրներով կազմել է 196.0մլն. դրամ՝ արտաքին և ներքին շուկաներում գոյություն ունեցող զբոսաշրջության ոլորտի

կազմակերպությունների հետ սերտ համագործակցության (մարզի գովազդի կազմակերպում, ինտերնետային կայքի վարում), թանգարանների կողմից գիդերի, տուր-օպերատորների, ուղեկցողների ուսուցման, քարտեզների, գրքույկների, տեղեկատվական բուկլետների հրատարակման, ազգային տոնակատարությունների ընդլայնված կազմակերպման նպատակով: Ծրագրերն իրականացվել են 20 տոկոսով:

7.3. Խնդիրները

- Ոլորտի թիվ մեկ խնդիրը շարունակում է մնալ մարզի տուրիստական հնարավորությունների լիարժեք մոնիտորինգը:
- Մարզում տուրիզմի զարգացման նպատակով ենթակառուցվածքների աշխատանքների բարելավումը /հյուրանոցային հնարավորությունների ստեղծումը և ընտանեկան տուրիզմի զարգացման համար հնարավորությունների ստեղծումը/:
- Տուրիզմի զարգացման նպատակով նոր ներդրումների և նոր ներդրողների որոնման աշխատանքների շարունակումը:

7.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Զբոսաշրջության ոլորտում վերհանված խնդիրների վերլուծության անհրաժեշտություն, ունեցած պատմամշակութային կոթողների և հուշարձանների նորովի ներկայացում և գովազդի ճիշտ կազմակերպում, ոլորտի զարգացմանն ուղղված նոր քայլերի իրականացում, համատեղ գիտաժողովների կազմակերպում՝ հատկապես մարզից արտերկրում գտնվող հայրենակից գործարարների ընդգրկմամբ:

8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐ

8.1 Քաղաքաշինություն

8.1.1 Քաղաքականության վերլուծություն

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

8.1.2 Իրականացման առաջընթացը

Քաղաքաշինության ոլորտում 2015 թվականի համար հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան կատարվել են հետևյալ աշխատանքները:

Մշակվել և ՀՀ քաղաքաշինության նախարարության քննարկման է ներկայացվել ՀՀ պետական բյուջեի հաշվին 2016-2018 թվականների ՀՀ Արագածոտնի մարզի ՄԺԾ ծրագրի և 2016 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում նախատեսվող կապիտալ ծախսերի բյուջետային հայտի նախագծերը:

ՀՀ կառավարության <<ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողության կարգը սահմանելու մասին>> 12.10.98 թ. թիվ 624 որոշման համաձայն վարչության մասնագետների կողմից հաշվետու ժամանակաշրջանում մարզի 19 համայնքներում կատարվել է քաղաքաշինության ոլորտի գործունեության պլանային ստուգումներ: Մարզի համայնքապետերին քաղաքաշինության գործունեության բնագավառում տրվել է խորհրդատվություն և մեթոդական օգնություն:

Մարզի տարածքում ապօրինի շինարարության հայտնաբերման և կանխարգելման նպատակով պարբերաբար կազմակերպվել են ստուգայցեր: Միջոցներ է ձեռնարկվել ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ: Հայտնաբերված ապօրինի շինարարության դադարեցման համար հաշվետու ժամանակաշրջանում 2 գրություն է ուղարկվել համայնքապետերին:

2015 թվականի ընթացքում ՀՀ կառավարության 30.07.98թ. թիվ 479 որոշմամբ հաստատված կարգի համապատասխան հողի գործառական նշանակության փոփոխության առաջարկով ստացվել է 7 գործ, որից 4 - ի նկատմամբ մարզպետարանը տվել է իր համաձայնությունը, 3 -ը մերժվել է:

2015 թվականի ընթացքում քաղաքաշինության վարչությունը ստացել և ընթացք է տվել **1014** գրության: ՈՒսումնասիրվել և քննարկվել է քաղաքաշինության ասպարեզին վերաբերող քաղաքացիների դիմումները և այդ ուղղությամբ ներկայացվել է առաջարկություններ մարզպետին:

ՀՀ կառավարության 2010թ. մարտի 4-ի թիվ 208-Ն որոշման պահանջներին համապատասխան մարզի համայնքապետերին հանձնարարվել է համայնքների 2016 թվականի բյուջեում նախատեսել ֆինանսական միջոցներ՝ համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերի մշակման համար:

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքների և Ծաղկահովիտ համայնքի գլխավոր հատակագծերը պատրաստ են: Նախագծերն իրականացվել են ՀՀ պետբյուջեի հաշվին ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով: Քաղաքաշինական գործունեությունն իրականացվում է նոր մշակված գլխավոր հատակագծերին համապատասխան:

Մարզի Աղձք և Արտաշավան համայնքների պատվերով կազմված գոտիավորման նախագծերը նախագծային թերությունների պատճառով չեն հաստատվել: Նշված համայնքների գոտիավորման նախագծերի լրամշակման նպատակով կազմվել է նոր ճարտարապետահատակագծային առաջադրանք և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն:

ՀՀ Արագածոտնի մարզկենտրոն Աշտարակ քաղաքի նոր գլխավոր հատակագիծը կազմվել է 2012 թվականին, քաղաքին հարակից Կարբի, Օհանավան, ՈՒշի, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ, Ագարակ, Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան համայնքները, սեփական միջոցներով գլխավոր հատակագիծ պատվիրելու հնարավորություն չունենալու պատճառով, առայժմ բնակավայրի գլխավոր հատակագծեր չունեն: Նշենք, որ դրանք պատմամշակութային նշանակության հին բնակավայրեր են և ունեն տուրիզմի զարգացման լայն հնարավորություններ: Այս տարածաշրջանում ռազմավարական մեծ նշանակություն և կարևորություն է համարվում զբոսաշրջության զարգացումը՝ որպես տնտեսության զարգացման խթան:

Քաղաքաշինական խնդիրների արդյունավետ լուծման և նյութական մշակութային ժառանգության պահպանման ապահովման նպատակով դիմել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարությանը՝ միջնորդելու ՀՀ կառավարությանը ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին հարակից Կարբի, Օհանավան, ՈՒշի, Սասունիկ, Օշական, Ոսկեվազ, Ոսկեհատ,

Ագարակ, Փարպի, Բազմաղբյուր և Ղազարավան համայնքների տարածքներն ընդգրկող հատվածի տարածքային հատակագծման նախագիծ կազմելու նպատակով միջոցներ հատկացնելու համար:

Բնակարանային ֆոնդի գույքագրման եղանակով դրանց անձնագրային տվյալների բազայի ստեղծման համար իրականացվել է Թալին, Աշտարակ, Ապարան և Արտենի համայնքների բնակելի շենքերի տվյալների հավաքագրման գործընթացը: Առաջնահերթորեն հավաքագրվել է նաև մարզում առկա հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, ուսումնարաններ և այլն), շենքերի վերաբերյալ հիմնական տեղեկատվական և կոնստրուկտիվ բնութագրերի տվյալները և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն:

Համակարգվել, վերահսկվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող շինարարական ծրագրերի իրականացման աշխատանքները:

ՀՀ կառավարության 19 նոյեմբերի 2015 թվականի N 1361 - Ն որոշմամբ 2015 թվականի նոյեմբեր ամսին ուժեղ քամիների հետևանքով համայնքներին հասցված վնասների հետևանքները վերացնելու առաջնահերթ նպատակով Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից ՀՀ Արագածոտնի մարզպետարանին հատկացվել է 204.414,4 հազ. դրամ՝ համաձայն N 1 հավելվածի.

ՀՀ պետական բյուջեի միջոցներով մարզում կատարվել է **1մլրդ.957մլն.172 հազ.** ՀՀ դրամի շինարարական աշխատանք, որից՝

ՀՀ քաղաքաշինության նախարարության պատվերով՝ - **1,203,389.5** ՀՀ դրամ
ՀՀ մշակույթի նախարարության պատվերով՝ - **48,467.8** ՀՀ դրամ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվերով՝ - **98,900.0** ՀՀ դրամ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ՝ - **606,414.40** ՀՀ դրամ

Ընդհանուր առմամբ 2015 թվականին ՀՀ Արագածոտնի մարզում քաղաքաշինության բնագավառում ՀՀ պետական բյուջեի հաշվին, ինչպես նաև բարեգործական կազմակերպությունների, բարերարների և այլ միջոցներով իրականացվող ծրագրերը համաձայն N 1 հավելվածի:

8.2.1 ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Արագածոտնի մարզի 3 քաղաքներում (Աշտարակ, Ապարան, Թալին) և 6 գյուղական համայնքներում առկա են 258 բազմաբնակարան շենքեր, 16,223 բնակարաններով, 410.7 հազ. ք.մ. ընդհանուր մակերեսով: Մարզի գյուղական համայնքների և քաղաքների բնակելի ֆոնդի 98%-ը սեփականաշնորհված է: Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից: Բազմաբնակարան շենքերի կառավարումը համայնքներում իրականացնում են համայնքները: Ապարան քաղաքում գործում է 14 համատիրություն, որն սպասարկում է 14 բազմաբնակարան շենք՝ 420 բնակարաններով: (5.81%):

ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների և քաղաքների բնակելի ֆոնդի 98%-ը

սեփականաշնորհված է: Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից: Բազմաբնակարան շենքերի կառավարումը գյուղական համայնքներում իրականացնում են համայնքները, Թալին քաղաքում՝ քաղաքապետարանը, Ապարան քաղաքում՝ 14 համատիրություններ, Աշտարակ քաղաքում՝ բազմաբնակարան շենքերի սպասարկման բաժինը:

ՀՀ Արագածոտնի մարզում ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 16100 հեռախոսահամար: CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Աշտարակ, Թալին, Ապարան քաղաքներում և Ծաղկահովիտ նախկին շրջկենտրոնում: Բաժանորդների թիվը կազմում է 6558 բաժանորդ:

Մարզի երեք քաղաքներում և գյուղական բնակավայրերում իրականացվում է աղբահանություն: Քաղաքներում այն իրականացնում են քաղաքապետարանին կից ստեղծված ձեռնարկությունները, իսկ գյուղերում՝ գյուղապետարանները: Մարզում գործում է Սասունիկի աղբավայրը, որտեղ պետք է կատարվի աղբի վերամշակում և ծածկում «Էկո-Տեխ>> ՍՊԸ-ի կողմից: Աշտարակ քաղաքի և հարակից ութ բնակավայրերի համայնքների ղեկավարների միջև ձեռք է բերվել նախնական համաձայնություն միջհամայնքային կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ, որը կիրականացնի համայնքներին առնչվող ընդհանուր խնդիրների լուծմանը, այդ թվում՝ աղբահանություն, ջրամատակարարում, բարեկարգում: Մարզի մի շարք համայնքներ նույնպես շահագրգռված են նման կազմակերպություններ ստեղծելու ուղղությամբ, որը բավականին կհեշտացնի նշված բնագավառներում կատարվող աշխատանքները: Մնացած բնակավայրերում գործում են պրիմիտիվ աղբավայրեր, որտեղ իրականացվում է աղբի կուտակում և այրում: Մարզում աշխատանքներ է տարվել աղբահանության կազմակերպման ուղղությամբ:

Մարզպետի կարգադրությունների համաձայն մարզի բնակավայրերում սանիտարական վիճակը բարելավելու, աղբահանություն իրականացնելու և բարեկարգելու նպատակով անցկացվել են սանիտարական միամսյակներ, որի մասին գրավոր տեղեկացվել է բոլոր համայնքների ղեկավարներին: Այդ ընթացքում համայնքներում իրականացվել են ինչպես սանմաքրման, աղբահանության, տարածքների բարեկարգման, այնպես էլ համայնքներ տանող ճանապարհների հարակից տարածքների մաքրման աշխատանքներ: Այդ աշխատանքները մեր կողմից տեղում ուսումնասիրվել և վերահսկվել են: Քանի որ սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները շարունակական են, ամբողջ տարվա ընթացքում դրանք մեր ուշադրության կենտրոնում են և հսկողության տակ:

Աղյուսակ 9. Բնակարանաշինության ոլորտի արդյունքային ցուցանիշները

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի

Ռազմավարական նպատակ՝ **Արագածոտնի մարզի քաղաքային համայնքների բնակարանային պայմանների բարելավում**	Մարդկանց համար ստեղծված են բնակության նորմալ պայմաններ	Բնակֆոնդի շահագործումը և սպասարկումը իրականացվում է սեփականատերերի կողմից:	258 բազմաբնակարան շենքեր, 16,223 բնակարաններով, 410.7 հազ. ք.մ. ընդհանուր մակերեսով:
Ծրագիր 1. **Մարզի քաղաքային համայնքներում բնակելի շենքերի տանիքների վերանորոգում**	Կառուցվելու է տանիք վերանորոգվելու է տանիք: Աշխատանքների համար պահանջվող գումարը	1500 քմ, 260.0 քմ. 1.5 մլն. դրամ	1500 քմ, 260.0 քմ. 1.5 մլն. դրամ
Արդյունք 1 **Շենքերը ենթակա չեն տեղումների ուղղակի ներգործությանը, բարձրացել է շենքերի անվտանգությունը**	ապահովված են ամուր և ապահով տանիքներով	280 ընտանիք	280 ընտանիք

8.2.2 Խնդիրները

Մարզի տարածքում կատարվող քաղաքաշինական աշխատանքների կատարման համար առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ՝ մասնավորապես շինարարական աշխատանքները ժամանակին և որակով սկսելու ու կատարելու համար խոչնդոտ է հանդիսանում ֆինանսական միջոցների անբավարարությունը:

8.2.3 Քաղած դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է բարելավել բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների շինարարության և հիմնանորոգման, առողջապահական, մշակութային, մարզական օբյեկտների, բնակֆոնդի և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործընթացները:

8.3 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Համայնքային զարգացում (ենթակառուցվածքներ)

Աղյուսակ 10. Ենթակառուցվածքների ոլորտի արդյունքային ցուցանիշները

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի

Ոլորտային նպատակ՝ **Արագածոտնի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում**	1. Մարդկանց բավարարվա-ծության աստիճանը ճանա-պարհների որակից 2. Մաքուր խմելու ջուր ունեցող մարդկանց տեսակարար կշիռը 3. Մարդկանց բավարարվածության աստիճանը ոռոգման համակարգերով, 4. Բնական գազ ունեցող տնային տնտեսությունների թիվը	42 % 85 % 85 % 43000	38 % 76 % 75 %, 38000
Արդյունք 1 **Արագածոտնի մարզի ճանապարհային ցանցը բարելավվել է**	1.1 Հյուսիս-հարավ ավտոճանապարհի կառուցում 1.2. Միջպետական և հանրա-պետական ճանապարհների նորոգում 1.3 Մարզային նշանակության ճանապարհների նորոգում 1.4. Համայնքային նշանակու-թյան ճանապարհների նորոգում 2. Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա միջպետական ու հանրապետա-կան նշանակության ճանա-պարհների երկարությունը 2.1. Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա մարզային ճանապարհների երկարությունը 2.2. Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա համայնքային նշանակության ճանապարհների երկարությունը	40.0 կմ 9.8 կմ. 18 կմ 288.8 կմ 380.3 կմ 55.8 կմ 98.2 կմ 24 կմ 42.2 կմ	20.0 կմ. 5.0 կմ 8 կմ. 288.8 կմ 380.3 կմ 55.8 կմ 98.2 կմ 24 կմ 42.2 կմ
Արդյունք 3. **Ջրամատակարարումը և ջրահեռացումը մարզում բարելավվել է**	3.1 2015 թ նորոգված ու կառուցված խմելու ջրագծերի երկարությունը /նորոգված գծեր կառուցված գծեր 3.2 2015 թ նորոգված ու կառուց-ված ջրահեռացման գծերի երկարությունը նորոգված կառուցված	20 կմ 25 կմ, 2 կմ 10 կմ 8կմ 2կմ	8.2 կմ 10.3 կմ. 0.9 կմ, 4.2 կմ 2.2 2.0
Միջոցառումներ **3.1 Խմելու ջրագծերի նորոգում /կառուցում մարզում** **3.2 Ջրահեռացման համակարգերի նորոգում /կառուցում/ մարզում**	Ֆինանսավուման կարիքը Խմելու ջրի հաստատուն մատ-չելիություն ունեցող մարզի բնակչության մասնաբաժինը	1902.8 մլն դրամ 40 %:	2611,0 մլն. դրամ, 12%

Արդյունք 4. **Գազ ունեցող տնային տնտե-սությունների թիվն աճել է**	4.1 Գազ ունեցուղ համայնքների թիվը 4.1 Գազամատակարարման գծերի երկարություն նախորդ տարվա նկատմամբ 2015 թ. գծերի կառուցում	80 102 % 14 կմ	80 104 % 3 կմ
Միջոցառումներ **4.1 Գազամատակարարման գծերի տեղադրում համայնքներում**	Ֆինանսավորման կարիքը	1100.0 մլն դրամ	2484.7 հազար դրամ

8.3.1 Ջրամատակարարում և ջրահեռացում

8.3.1.1 Քաղաքականության վերլուծություն

Ջրամատակարարման ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի մարզի բնակչության աղքատության նվազեցմանը:

Անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը նույնպես կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ անհրաժեշտ է նաև նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանքն է: Ջրի հաշվառման անկատար համակարգի բարելավումը նույնպես հանդիսանում է ոլորտի քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը:

Մարզի **31** համայնքների /այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը իրականացնում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ /28/, և «Երևան ջուրը» /3/, իսկ մնացած համայնքներինը իրականացվում է համայնքների կողմից: Մյուս բնակավայրերի, հատկապես գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Մարզպետի հանձնարարությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ ջրամատակարարման–ջրահեռացման համակարգերի վիճակի բարելավման ուղղությամբ: Այդ հանձնարարականը ևս գրավոր ներկայացվել է բոլոր համայնքների ղեկավարներին և <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի Աշտարակի տեղամասի և Թալինի ու Ապարանի

ենթատեղամասերի պետերին: Այդ աշխատանքները, ինչպես նաև խմելու ջրի վարակազերծման, ՕԿՋ-երի գլխամասերի պահպանման և արտաքին հոսքերի մուտքերը համակարգ կանխելու աշխատանքները մեր կողմից վերահսկվում են և գտնվում են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում:

8.3.1.2 Իրականացման առաջընթացը

Նշված խնդիրների լուծման նպատակով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կողմից Ասիական զարգացման բանկի, Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ 2015 թ-ին իրականացվել է ջրամատակարարման և ջրահեռացման բարելավմանն ուղղված շինարարական աշխատանքներ: 2015 թվականին մարզում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, ''Վերջին օրերի սրբեր'' բարեգործական կազմակերպության միջոցների հաշվին իրականացվել է ՕԿՋ-ների, խորքային հորերի, պոմպակայանների, ջրամատակարարման ներքին ցանցերի վերանորոգման և վերականգնման աշխատանքներ, ոլորտում արդեն ներ է դրվել **3,573,775.5** հազար դրամ :

N	Համայնքի անվանումը	Ծրագրերի անվանումը	Ծրագրի գումարի չափը
1	*2*	*3*	*4*
		ԸՆԴԱՄԵՆԸ՝ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ այդ թվում՝	**3,573,775.5**
I.		**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ**	**3,472,591.2**
1.1		**Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ**	**756,000.0**
1	Մարզ	Աշտարակ, Օհանավան,Կարբի, Մուղնի,Սասունիկ համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում	756,000.0
1.2		**Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ/«ՀՋԿ» ՓԲԸ/**	**1,539,000.0**
1	Մարզ	Ոսկեվազ,Ոսկեհատ,Օշական համայնքների խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում,համակարգի բարելավում	728,000.0
2	Նոր Ամանոս	համայնքի, խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում,համակարգի բարելավում	60,000.0
3	Թալին	համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում,համակարգի բարելավում	500,000.0
4	Արուճ	Ջրամատակարարման համակարգի բարելավում	141,000.0
5	Կանչ	Ջրամատակարարման համակարգի բարելավում	36,000.0
6	Պարտիզակ	Խմելու ջրագծերի համակարգի բարելավում /4.6կմ/	54,000.0
7	Սորիկ	խմելու ջրի ներքին ցանցի կառուցում և հիմնանորոգում,համակարգի բարելավում	20,000.0

1.3		**ՀՀ ԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի (IFAD) և համայնքների համաֆինանսավորման միջոցներով**	**1,177,591.2**
1	Արտենի	Խորքային հորի խմելու ջրի ջրագծի կառուցում	26,591.2
2	Նոր Եդեսիա	խմելու ջրի ներքին ցանցի կառուցում	264,000.0
3	Արագածավան	համայնքի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում	750,000.0
4	Լուսագյուղ	համայնքի խմելու ջրի ներքին և արտաքին ցանցի վերանորոգում	137,000.0
4			
II.		***ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԵՎ ԱՅԼ***	**95,817.6**
2.4		**«Վերջին օրերի սրբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչություն**	**84,517.6**
1	Ավշեն	Ջրամատակարարման համակարգի բարելավում	5,032.8
2	Կաթնաղբյուր	համայնքի, խմելու ջրագծի կառուցում	1,644.5
3	Քուչակ	համայնքի, խմելու ջրագծի վերանորոգում	6,426.4
4	Լուսագյուղ	համայնքի, խմելու ջրի ջրավազանի կառուցում	3,400.0
5	Վարդաբլուր	համայնքի, Խմելու ջրի ներքին ցանցի խողովակաշարի փոխարինում	1,423.0
6	Գետափ	Օրվա կարգավորիչ ջրամբարում /ՕԿՋ-ի/ վերակառուցում	4,062.0
7	Նիգավան	համայնքի, խորքային հորի հորատում	5,464.0
8	Ծաղկահովիտ	Խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում	6,098.4
9	Շենավան	Խմելու ջրագծի վերանորոգում	7,265.0
10	Վարդենիս	Խմելու ջրի ներքին ցանցի խողովակաշարի փոխարինում	6,032.6
11	Տեղեր	Խմելու ջրի ներքին ցանցի խողովակաշարի փոխարինում	3,700.0
12	Արայի	Խորքային խմելու ջրի դուրս բերում	10,000.0
13	Դիան	համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի / 1700մ երկարությամբ 100մմ տրամագիծ/ կառուցում	6,976.6
14	Ծաղկաշեն	Խմելու ջրի ցանցի խողովակաշարի փոխարինում	2,402.7
15	Գեղաձոր	Խմելու ջրի ցանցի խողովակաշարի փոխարինում	5,859.2
16	Ագարակավան	Խմելու ջրի ցանցի խողովակաշարի փոխարինում	6,091.2
17	Ափնագյուղ	Խմելու ջրի ցանցի խողովակաշարի փոխարինում	4,062.2

2.5		**ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մաքուր էներգիա և ջուր» ծրագիր**	**11,300.0**
1	Հարթավան	Խմելու ջրի համակարգի վերակառուցում	11,300.0
III.		***ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵ***	**5,366.7**
1	Ագարակավան	Խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգում	900.0
2	Գետափ	Օրվա կարգավորիչ ջրամբարում /ՕԿՋ-ի/ վերակառուցում	1,005.0
3	Ավշեն	Ջրագծի վերանորոգում	1,315.0
4	Եղիպատրուշ	Ինքնահոս ջրամատակարարման ցանցի վերանորոգում	209.5
5	Ն.Բազմաբերդ	Օրական կարգավորման ջրամբարի և ներքին ցանցի վերանորոգում	987.1
6	Ն.Բազմաբերդ	Խմելու ջրերի կապտաժների և ընդունիչ հորերի վերանորոգում և մաքրում	950.1

Հաշվետու ժամանակաշրջանում հետևողական աշխատանք է տարվել ազգաբնակչությանը մաքուր խմելու ջրով ապահովելու համար: Հաշվետու ժամանակշրջանում մարզում չի առձանագրվել սուր աղիքային հիվանդությունների բռնկման դեպք: Մարզի 42 համայնքների /այդ թվում երեք քաղաքների ջրամատակարարումը իրականացնում է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ /39/, և «Երևան ջուրը» /3/, իսկ մնացած համայնքներինը /72/ իրականացնում են համայնքների լոկալ ջրաղբյուրներից:

Մարզի երեք քաղաքներում և շուրջ 40 համայնքներում իրականացվել է խմելու ջրամատակարարման ծառայություններ 359.3 մլն. դրամ գումարով «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կողմից, որի դիմաց գանձվել է վարձավճար 310.0մլն. դրամի կամ 86.3 %:

Աղյուսակ 11. Ջրամատակարարման ոլորտի 2015թ. արդյունքային ցուցանիշները

h/h	**Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր**	**Արդյունքային ցուցանիշներ**	**Թիրախ**	**Փաստացի**
	Ռազմավարական նպատակ – Բարելավել ջրամատակարարման վիճակը մարզում: Ջրագծերի կառուցում, կապտաժային կառուցվածքների նորոգում, ՕԿՋ-ներ կառուցում	Մաքուր խմելու ջուր ունեցող մարդկանց տեսակարար կշիռը,	85%	65%

		Մարդկանց բավարարվածության աստիճանը ոռոգման համակարգերով,	85%	65%
		Կապտաժային կառուցվածքների վերանորոգում, ջրատարի կառուցում, ՕԿՋ մրզի 31 համայքներում	156000	6 համայքնե-րում կառու-ցումներն ավարտվել են, մյուս-ներում աշխա-տանքներն ընթանում են

8.3.1.3 Խնդիրները

Մարզի համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնական մասը ունեն 30-40 տարվա հնություն, խարխլված են և ենթակա են հիմնանորոգման: Պետբյուջեի և այլ ներդրողների սուղ միջոցները բավարար չեն հիմնախնդիրները կարգավորելու համար, մինչդեռ ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

8.3.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են խիստ անբարվոք ու մաշված վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն մարզի զարգացման ծրագրով նախատեսված առաջնահերթությունները:

8.3.2 Գազամատակարարում

8.3.2.1 Քաղաքականության վերլուծություն

Գազիֆիկացումը մարզի զարգացման կարևոր նախապայմաններից մեկն է: Երկարատև ձմեռները և այլընտրանքային էներգիայի աղբյուրների բացակայությունը ընդգծում են բնական գազի մատակարարման հրատապությունը համայնքների համար: Միաժամանակ գազի առկայությունը յուրաքանչյուր տնային տնտեսությունում հնարավորություն կտա տնտեսել կիսամյակային շուրջ **10-12** խ.մ. վառելափայտ, որն իր հերթին նշանակում է շրջակա միջավայրի էկոհամակարգի բարելավում:

Համայնքներում գերակայություն է համարվում գազամատակարարման ցանցի կառուցումը: «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից նախատեսվել է իրականացնել գազատար ցանցերի ընթացիկ վերանորոգման, գազամատակարարման ռեժիմի կարգավորման աշխատանքներ:

8.3.2.2 Իրականացման առաջընթացը

01.04.2015թ. դրությամբ գազաֆիկացված են 19929 բնակարաններ, որոնցից 5142-ը բազ-

մաբնակարան շենքերում, իսկ 13159-ը՝ առանձնատներում: Ըստ տարածաշրջանների՝

Տարածաշրջանը	Բնակավայ-ների թիվը	Ընդ. բաժանորդ	Այդ թվում	
			ԲԲՇ	Առանձնատուն
Աշտարակ	18	10271	3512	7251
Թալին	16	3690	720	3143
Ապարան	24	4340	910	2765
Արագած				
Ընդամենը	58	19929	5142	13159

Փաստացի 58 համայնքներում կան գազասպառողներ:

2015 թվականին <<Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի վերլուծության և կառավարման գրասենյակ>>-ի (IFAD) և համայնքների համաֆինանսավորման միջոցներով կատարվում են գազաֆիկացման աշխատանքների ընդլայնում թվով 19 համայնքներում՝ Սասունիկ, Թալին, Աղձք Կարբի Օհանավան,Դաշտադեմ, Արտենի Արագածավան, Քուչակ, Կոշ, Ապարան, Արագած, Արայի, Հարթավան, Շենավան, Վարդենիս, Վարդենուտ, Ափնա և Ծաղկաշեն համայնքների գազիֆիկացման աշխատանքները,որի ընդհանուր արժեքը կազմում է 2 մլրդ 143.5 մլն. դրամ:

Աղյուսակ 13. Գազամատակարարման ոլորտում իրականացված 2015 թ. արդյունքային ցուցանիշները

Հ/Հ	Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
1	**Ռազմավարական նպատակ –** Ապահովել մարզի բնակչությունը բնական գազով	Մարզի 15 համայնքի թվով 142 տնտեսությունների գազաֆիկացում.	8553 տնտեսու-թյուն	Աշխատանքնե-րն սկսվել են
		Բնական գազ ունեցող տնային տնտեսությունների թիվը	42000	

8.3.2.3 Խնդիրները

Չնայած բաժանորդների թիվը խորհրդային տարիների համեմատ աճել է շուրջ **60,0%**-ով, կամ նախկինում **8233**-ի դիմաց այն կազմել է **13812** բաժանորդ, մարզում գազիֆիկացումն իրականացվում է դանդաղ տեմպերով: Մարզի **114** բնակավայրերից գազիֆիկացված է ընդամենը **56** բնակավայր:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի ներդրումները բավարար չեն ապահովելու նույնիսկ հիմնական գազատարին համեմատաբար մոտ գտնվող համայնքների գազիֆիկացման համար:

Տեղեկատվության պակաս կա այս բնագավառում:

8.3.2.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը

պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Անհրաժեշտ է գազիֆիկացման աշխատանքներ իրականացնել գյուղական, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում՝բնակչության արտահոսքը կանխելու և գյուղերի հետագա զարգացման համար նպաստավոր սոցիալական պայմաններ ստեղծելու համար:

8.3.4 Ճանապարհաշինություն

8.3.4.1 Քաղաքականության վերլուծություն

Ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգմանը ու պահպանմանը:

2015 թ. ՄԶԾ աշխատանքային պլանով նախատեսվել են.

ա/ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների նորոգում

բ/ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ

գ/ մարզային նշանակության ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ

Վերոհիշյալ աշխատանքներն իրականացնելու համար հիմնանորոգման ժամանակ կատարվելու է ինչպես փոսային նորոգում, այնպես էլ միաշերտ ասֆալտբետոնյա ծածկի կառուցման աշխատանքներ, իսկ վերանորոգման, և սպարկման ժամանակ՝ նաև կոպճապատման և հողային հարթեցման աշխատանքներ

8.3.4.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ 2015 թ. Պետական բյուջեով Արագածոտնի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 102.000.0 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվում է 389.4 կմ՝ 66.6 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 55.4 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 35.400.0 մլն դրամ արժեքով:

ՀՀ 2015 թ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ Արագածոտնի մարզում իրականացվում է՝

1. ՀՀ կառավարության 02.07.2015թ. թիվ 766-Ն որոշմամբ մարզի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների շրջանակում հիմնանորոգվում է Թալին քաղաքի Սայաթ-Նովա փողոցը 25.0 մլն դրամ (2100 քմ) , Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի նորոգում 25.0 մլն դրամ (3200 քմ) և Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի նորոգում 25.0 մլն դրամ արժեքով (2850 քմ) :
2. 2015-2016թթ. Հ-21 –Հնաբերդ 1.7կմ հատվածը98.9մլն.դրամ արժեքով ՀՀ պետ. Բյուջեի ֆինանսավորմամբ 2015թ դրությամբ: Աշխատանքներն ավարտված են:
3. Մ-1 Երևան-Աշտարակ միջպետական նշանակության Ա/Ճ-ի/Հյուսիս-Հարավ/ 10,7 կմ հատվածը 855.0 մլն դրամ արժեքով, Ասիական բանկի ֆինանսավորմամբ:
4. Մ-1 Աշտարակ-Թալին միջպետական նշանակության ավտոճանապարհի/Հյուսիս-Հարավ/

40.2 կմ հատվածը 1 մլրդ 900 մլն դրամ արժեքով Ասիական բանկի ֆինանսավորմամբ:

5. 2015թ. Թալին-Դաշտադեմ-Քարակերտ 11.3 կմ հատվածը 894.5 մլն դրամ արժեքով համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Աշխատանքներն ավարտված են:
6. Հ-19 Աշտարակ-Օշական-Դաշտ-Մ3 8.8կմ հատվածը 833.9 մլն դրամ արժեքով համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ: Աշխատանքները ավարտված են:

Ընդամնը 4մլրդ 760մլն դրամ արժողությամբ:

Աղյուսակ 12. Ճանապարհաշինության ոլորտի արդյունքային ցուցանիշները

h/h	Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
		վերանորոգվելու է	9000 քմ.	3800 քմ
	Ռազմավարական նպատակ 1. Արագածոտնի մարզի ենթակառուցվածքների վիճակի բարելավում	Մարդկանց բավարարվածության աստիճանը ճանապարհների որակից,	30%	25%
	Ծրագիր 1. Արագածոտնի մարզի ճանապարհային պայմանների բարելավում	Միջպետական և հանրա-պետական ճանապարհների նորոգում-կմ-	38	12
		Մարզային նշանակության ճանապարհների նորոգում- կմ	8.6	4.2
		Համայնքային նշանակության ճանապարհների նորոգում- կմ	12	6
		Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա միջպետական ու հանրապետական նշանակության ճանապարհների երկարությունը (կմ)	246, 217	246, 217
		Ընթացիկ և ձմեռային պահպա-նության ենթակա մարզային ճանապարհների երկարությունը (կմ)	332, 65.3	332, 65.3
		Ընթացիկ և ձմեռային պահպա-նության ենթակա համայնքային նշանակության ճանապարհների երկարությունը (կմ)	24 37	24 37

8.3.4.3 Խնդիրները

Մարզի տարածքում կատարվող ճանապարհաշինական աշխատանքների կատարման ժամանակ առաջանում են որոշակի դժվարություններ և խնդիրներ՝ մասնավորապես եղանակային անբարենպաստ պայմանները /շինարարական աշխատանքների սկսմանը զուգահեռ /ապրիլ, մայիս, հունիս ամիսներին/ բավականին երկար ժամանակով սկսվեցին անձրևային եղանակներ, ինչը խոչնդոտ հանդիսացավ աշխատանքների ժամանակին և որակով կատարմանը:

8.3.4.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է ապահովել տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակեցությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը, ինչպես նաև հեռավոր գյուղական համայնքների բնակչության մոտ նկատվող արտահոսքի միտումը:

Անհրաժեշտ է բարելավել ճանապարհաշինական փաստաթղթերի մշակման, մարզային ենթակայության ճանապարհների շինարարության և հիմնանորոգման կառավարման գործընթացները:

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9.1 Տարածքային կառավարում

9.1.1 Քաղաքականության վերլուծություն

Հայաստանի Հանրապետության մարզերում ներդրված տարածքային կառավարման համակարգը գործում է արդյունավետությամբ, սակայն շարունակական կատարելագործման կարիք ունի: Դեռևս 2009 թվականից շրջանառության մեջ է ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, որը ներկայացվել է մարզպետարաններին և որի վերաբերյալ Արագածոտնի մարզպետարանի կողմից նույնպես ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1795 որոշմամբ հաստատված ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կազմակերպական կառուցվածքը ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ ենթարկվեց փոփոխությունների: Մարզպետարանի կառավարման նոր կազմակերպական կառուցվածքը հնարավորություն է տալիս հիմնականում լուծելու առկա հիմնախնդիրները և արդյունավետ կերպով իրականացնելու մարզպետի լիազորությունները: Հետագայում այս փոփոխությունների դինամիկան կարող է շարունակվել, քանի որ համակարգը պետք է հարմարեցվի գոյություն ունեցող զարգացումներին: Հայաստանի տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արագածոտնի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական էջով (http://aragatsotn.region.am): Դա հնարավորություն է տալիս հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվություն: Էլեկտրոնային կառավարման բնագավառում Արագածոտնի մարզպետարանում որոշակի քայլեր արդեն արվել են: Առկա է տվյալների բավարար բազա, որը սակայն կարիք ունի համակարգման, տվյալների թարմացման, ինչպես նաև դրանից օգտվելու մեխանիզմների մշակման: ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավության 2009 թվականի գերակա խնդիրների ծրագրով գերակա խնդիր է համարվել նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, որի լուծման քայլ է հանդիսանում էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի ներդրումը ՀՀ մարզպետարաններում: Mulberry համակարգը 2009 թվականի

դեկտեմբերին վերջնականապես ներդրվել է մարզպետարանում:

9.1.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ Արագածոտնի մարզում 2015 թվականին շարունակվել են տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի կատարելագործման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հիմքերի ամրապնդմանն ուղղված միջոցառումները:

Տարածքային կառավարման բնագավառում 2015 թվականին Արագածոտնում իրագործվել է հետևյալը.

Մարզպետին օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում ֆինանսների, քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի և սպորտի, բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում ՀՀ կառավարության տարածքային քաղաքականության իրականացում, ոստիկանության և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգում:

1) Արագածոտնի մարզպետարանի, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ պետական հատվածի փոխհարաբերությունների շարունակական կատարելագործմանն ուղղված միջոցառումների իրականացում:

2) Մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնության, դրա տրամադրման մեխանիզմների հստակեցում և դրանց արդյունավետության բարձրացում:

3) Մարզային զարգացման գործընթացներում Արագածոտնի մարզի խորհրդի դերը բարձրացնելուն ուղղված միջոցառումներ:

4) Մարզպետարանի աշխատակազմի կարողությունների որոշակի հզորացում:

2015 թվականին աճել է մարզպետարանի՝ համակարգիչներով և ժամանակակից կապի միջոցներով հագեցվածության մակարդակը: Արագածոտնի մարզպետարանը համալրվել է **4** նոր համակարգիչներով, **2** տպիչ/սկաներով:

Մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներքին կառուցվածքի և մասնագետների միջև գործառույթների բաշխման սկզբունքների նույնականությունն ու միասնականությունն ապահովելու նպատակով համապատասխան փոփոխություններ են կատարվել աշխատակազմի առանձին ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերում: Ընթացել է մարզպետարանի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համալրման գործընթացը: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է թվով **18** քաղաքացիական ծառայողների վերապատրաստում:

5) Մարզպետարանի ֆունկցիոնալ գործունեության ապահովման տեսանկյունից կարևոր, ներքին փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպում և այդ գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների պարտադիր կիրառում:

Բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես այս համակարգը ներդնելու անհրաժեշտությունը: Եթե համակարգը ներդրվի տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ստորաբաժանումներում, ապա զգալիորեն կբարձրանա այս մարմինների հետ աշխատելու

արդյունավետությունը, համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը:

6) 2015 թվականի ընթացքում շրջանառության մեջ է եղել ՀՀ մարզերում տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգը սահմանելու մասին ՀՀ Նախագահի նոր հրամագրի նախագիծը, որը քննարկվել է մարզպետարանում: ՀՀ Նախագահի նոր հրամանագրի ընդունման դեպքում տարածքային կառավարման համակարգը զգալիորեն կկատարելագործվի:

9.1.3 Խնդիրները

Տարածքային կառավարման համակարգում ձևավորված մշակույթի առանձին տարրեր անհրաժեշտ է տարածել նաև տեղական ինքնակառավարման համակարգում: Առանց տեղական ինքնակառավարման համակարգի հետ սերտ համագործակցության հնարավոր չէ ապահովել երկու համակարգերի կառավարման արդյունավետությունը: Այս ենթատեքստում բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես Mulberry համակարգը ներդնելու անհրաժեշտությունը: Եթե համակարգը ներդրվի քաղաքապետարաններում ու գյուղապետարաններում, զգալիորեն կբարձրանա համայնքների հետ աշխատելու արդյունավետությունը, համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը:

9.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Կարելի է հետևություն անել, որ այսօր տարածքային կառավարման համակարգում շեշտադրումը հիմնականում պետք է լինի բնագավառի օրենսդրության կատարելագործման, համակարգի էլեկտրոնային կառավարման, մարզպետարանի տեխնիկական հագեցվածության մակարդակների բարձրացման, կադրերի որակավորման շարունակական բարձրացման վրա (պետական կառավարման համակարգում, ի տարբերություն մասնավոր առանձին ոլորտների, աշխատակիցների վարձատրության չափը համեմատաբար ցածր է և, բնականաբար, բարձր որակավորում ունեցող կադրերի առկայությունը համակարգում պակասելու միտում ունի, կադրերին ներկայացվող որակական բարձր պահանջները ենթադրում են նաև բարձր աշխատավարձի առկայություն, որն իր հերթին հակադարձ կերպով նպաստելու է ծառայողների որակավորման բարձրացմանը):

9.2 Տեղական ինքնակառավարում

9.2.1 Քաղաքականության վերլուծություն

2015 թվականին մարզի 114 համայնքներում կարևորագույն խնդիր է համայնքների կարողությունների շարունակական բարձրացումը: Համայնքների կարողությունների բարձրացման կարևոր նախապայման է դոտացիաների տրամադրումը: Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկն այն է, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Չլուծված հիմնախնդիր է մնում համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման լիարժեք ապահովումը, որի իրականացման համար անհրաժեշտ է գործուն մեխանիզմներ մշակել: Մասնավորպես անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել «Տեղական ինքնակառավարման մասին», «Հողի հարկի մասին», «Գույքահարկի մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներում, բարձրացնել հարկային վարչարարության մակարդակը և որակը: Այս առումով անհրաժեշտ է բարձրացնել համայնքի ավագանու՝ որպես համայնքի

ներկայացուցչական մարմնի դերը՝ համայնքի գույքի կառավարման, համայնքի ղեկավարի գործունեության վերահսկման մասով:

9.2.2 Իրականացման առաջընթացը

2015 թվականի ընթացքում մարզի համայնքներում շարունակվել է համայնքների կարողությունների շարունակական բարձրացման գործընթացը:

Շարունակվել է համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման լիարժեք ապահովմանը նպաստող քայլերի իրականացումը: Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ներկա ֆոնի վրա, մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակները: Խնդիրը դեռևս քննարկման փուլում է:

2015 թվականի ընթացքում Արագածոտնի մարզպետարանն աշխատանքներ է տարել համայնքային ծառայության ոլորտի խնդիրների շարունակական լուծման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում մարզի **40** համայնքներում, կայացել են համայնքնային ծառայության մրցույթներ, որոնց ընդհանուր առմամբ դիմել են **61** քաղաքացիներ՝ մրցութային հիմունքներով համալրվել է համայնքային ծառայության **47** թափուր պաշտոն:

Նշված ժամանակահատվածում **155** համայնքնային ծառայողներ վերապատրաստվել են: 2015 թվականի ընթացքում Արագածոտնի մարզի գյուղապետարանների աշխատակազմերում աշխատող, նախկինում վերապատրաստում անցած թվով **55** համայնքնային ծառայողներ ատեստավորվել են: Առանձնակի ուշադրության է արժանացել ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2009 թվականի հունվարի 26-ի N05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն, Արագածոտնի մարզի քաղաքային և գյուղական համայնքների ղեկավարների կողմից գյուղապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների, այդ թվում՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև պաշտոնից ազատված անձանց վերաբերյալ գրանցամատյանները (Ձև1, Ձև2) սահմանված ժամկետներում և պատշաճ լրացված վիճակում ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը տրամադրելու խնդիրը:

Գյուղապետարանների աշխատակազմերին այս հարցում ցույց է տրվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն և առաջարկվել է սահմանված կարգով լրացնել գրանցամատյանները, պարբերաբար թարմացնել դրանցում առկա տվյալները և փոփոխությունների դեպքում ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: 2015 թվականի ընթացքում ընթացքում օրակարգային կարևոր խնդիրներից էր մարզի բոլոր համայնքների՝ ժամանակակից համակարգչային սարքավորումներով ապահովման հարցը, որը շարունակական լուծում է ստացել: 2015 թվականի ընթացքում, ըստ համայնքներից ստացված տվյալների, 114 համայնք ունի ժամանակակից պահանջներին բավարարող համակարգիչներ, իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրեր, 82 համայնք օգտվում է ինտերնետ կապից:

Արդյունքում այս համայնքները հնարավորություն են ստացել պատշաճ կերպով վարել իրենց գործավարությունը, ապահովել տեղեկատվության արդյունավետ փոխանակումը մարզպետարանի և այլ մարմինների հետ: Մարզի բոլոր համայնքներն ունեն էլեկտրոնային հասցեներ, սակայն համայնքների մի մասի մոտ համակարգիչների և ինտերնետային կապի

բացակայության պատճառով, տեղեկատվության փոխանակումը, բնականաբար, դեռևս արդյունավետ չի իրականացվում: Հաշվետու ժամանակաշրջանում մարզի 12 համայնքներում տեղի է ունեցել համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ, իսկ 2 համայնքում արտահերթ ընտրություն, 6 համայնքում ավագանու անդամների հերթական ընտրություններ:

Մարզպետարանի կողմից նշված մարմինների ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար համայնքներին ցույց է տրվել մեթոդական և խորհրդատվական օգնություն: 2015 թվականի ընթացքում մարզպետարանի ուշադրության կենտրոնում է եղել համայնքային զարգացման ծրագրերի իրականացումը: Առավելապես ուշադրություն է դարձվել համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ) վերականգնմանն ուղղված ծրագրերի վրա:

9.2.3 Խնդիրները

Տարածքային կառավարման համակարգի «Խնդիրները» ենթավերնագրի տակ նշվել է, որ համակարգում ձևավորված մշակույթի առանձին տարրեր անհրաժեշտ է տարածել նաև տեղական ինքնակառավարման ոլորտում: Փաստորեն այս երկու ոլորտներն իրականում սերտ համագործակցության մեջ են, սակայն երկու համակարգերի կառավարման բարձր արդյունավետություն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ավելի հստակ մեխանիզմներ: Արդեն նշվել է, որ բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես Mulberry համակարգը ներդնելու անհրաժեշտությունը: Եթե համակարգը ներդրվի քաղաքապետարաններում ու գյուղապետարաններում, զգալիորեն կբարձրանա համայնքների հետ աշխատելու արդյունավետությունը, համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը, կգործարկվեն ոլորտների խնդիրների լուծման համանման եղանակներ:

9.2.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Կարելի է հետևություն անել, որ այսօր տեղական ինքնակառավարման համակարգում նույնպես շեշտադրումը հիմնականում պետք է լինի բնագավառի օրենսդրության կատարելագործման, համակարգի էլեկտրոնային կառավարման, համայնքների ղեկավարների աշխատակազմերի տեխնիկական հագեցվածության մակարդակների բարձրացման, կադրերի որակավորման շարունակական բարձրացման վրա (տեղական ինքնակառավարման համակարգում նույնպես, ի տարբերություն մասնավոր առանձին ոլորտների, աշխատակիցների վարձատրության չափը համեմատաբար ցածր է և, բնականաբար, բարձր որակավորում ունեցող կադրերի առկայությունը համակարգում պակասելու միտում ունի, իսկ մարզի գյուղական համայնքների մեծ մասում որակյալ կադրերի խիստ պակաս կա, կադրերին ներկայացվող որակական բարձր պահանջները ենթադրում են նաև բարձր աշխատավարձի առկայություն, որն իր հերթին հակադարձ կերպով նպաստելու է համայնքային ծառայողների որակավորման բարձրացմանը):

9.3 Քաղաքացիական հասարակություն

9.3.1 Քաղաքականության վերլուծություն

Ընդհանուր առմամբ հասարակության մի մասը սպասողական դիրքորոշում ունի մարզում ընթացող գործընթացների նկատմամբ, որն ունի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի գործունեության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինի այդ կրավորական դիրքորոշման վերացումը և հասարակության լայն խավերի ընդգրկումը, մասնակցությունը մարզային և համայնքային զարգացման գործընթացներին: Այս հարցը լուծելու համար օրենսդրության առումով բավարար պայմաններ կան, խնդիրը մարդկանց որոշակի հատվածի հոգեբանության, հոգեկերտվածքի և մտածողության վերափոխման մեջ է, որը պետք է իրականացվի պետական, տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան քայլերի շնորհիվ:

9.3.2 Իրականացման առաջընթացը

2015 թվականի ընթացքում մարզի համայնքներում շարունակվել է համայնքների կարողությունների շարունակական բարձրացման գործընթացը:

Շարունակվել է համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման լիարժեք ապահովմանը նպաստող քայլերի իրականացումը: Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման ներկա ֆոնի վրա, մարզի համայնքների խոշորացման խնդիրը քննարկվել է մարզպետարանում և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել խոշորացման հնարավոր տարբերակները: Խնդիրը դեռևս քննարկման փուլում է:

2015 թվականի ընթացքում Արագածոտնի մարզպետարանն աշխատանքներ է տարել համայնքային ծառայության ոլորտի խնդիրների շարունակական լուծման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում մարզի **26** համայնքներում, կայացել են համայնքային ծառայության մրցույթներ, որոնց ընդհանուր առմամբ դիմել են **26** քաղաքացիներ՝ մրցութային հիմունքներով համալրվել է համայնքային ծառայության **21** թափուր պաշտոն: Նշված ժամանակահատվածում **120** համայնքնային ծառայողներ վերապատրաստվել են: 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Արագածոտնի մարզի գյուղապետարանների աշխատակազմերում աշխատող, նախկինում վերապատրաստում անցած թվով **14** համայնքնային ծառայողներ ատեստավորվել են: Առանձնակի ուշադրության է արժանացել ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2009 թվականի հունվարի 26-ի N05-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն: Գյուղապետարանների աշխատակազմերին այս հարցում ցույց է տրվել մեթոդական ու խորհրդատվական օգնություն և առաջարկվել է սահմանված կարգով լրացնել գրանցամատյանները, պարբերաբար թարմացնել դրանցում առկա տվյալները և փոփոխությունների դեպքում ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն: Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը: 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում օրակարգային կարևոր խնդիրներից էր մարզի բոլոր համայնքների՝ ժամանակակից համակարգչային սարքավորումներով ապահովման հարցը, որը շարունակական լուծում է ստացել: 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում, ըստ համայնքներից ստացված տվյալների, 114 համայնք ունի ժամանակակից պահանջներին բավարարող համակարգիչներ, իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրեր, 82 համայնք օգտվում է ինտերնետ կապից: Արդյունքում այս համայնքները հնարավորություն են ստացել

պատշաճ կերպով վարել իրենց գործավարությունը, ապահովել տեղեկատվության արդյունավետ փոխանակումը մարզպետարանի և այլ մարմինների հետ: Մարզի բոլոր համայնքներն ունեն էլեկտրոնային հասցեներ, սակայն համայնքների մի մասի մոտ ինտերնետային կապի բացակայության պատճառով, տեղեկատվության փոխանակումը, բնականաբար, դեռևս արդյունավետ չի իրականացվում: Հաշվետու ժամանակաշրջանում մարզի 6 համայնքներում տեղի է ունեցել համայնքների ղեկավարների հերթական ընտրություններ, իսկ 3 համայնքում ավագանու հերթական ընտրություններ: Մարզպետարանի կողմից նշված մարմինների ընտրությունները պատշաճ մակարդակով անցկացնելու համար համայնքներին ցույց է տրվել մեթոդական և խորհրդատվական օգնություն: 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետարանի ուշադրության կենտրոնում է եղել համայնքային զարգացման ծրագրերի իրականացումը: Առավելապես ուշադրություն է դարձվել համայնքային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրամատակարարման, ջեռուցման, գազամատակարարման համակարգեր, կապի միջոցներ, սոցիալական և կրթական ենթակառուցվածքներ) վերականգնմանն ուղղված ծրագրերի վրա:

Աղյուսակ 14. ՀՀ Արագածոտնի մարզում համայնքների բյուջեների հրապարակայնության և համայնքներում ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Համայնքների բյուջեների հրապարակայնությունը (համայնքային բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները)			**ՀՀ համայնքներում ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացում**	
Ցուցատախտակ-ներին և տեսանելի այլ վայրերում տեղադրում	Հեռուստատեսու-թյամբ հեռարձակում	Ինտերնե-տային կայք էջում տեղադրում	Գործավա-րության մատյանի առկայություն	Ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձ-նացված աշխա-տասենյակի առկայություն
114	0	54	114	49

Ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.6 կետի 3-րդ ենթակետի պահանջների, ՀՀ տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2010 թվականի մայիսի 24-ի N01/16/3030-10 հանձնարարականի համաձայն, մարզի համայնքների ղեկավարներին առաջարկվել է պարբերաբար (յուրաքանչյուր եռամսյակ) ներկայացնել տեղեկատվություն՝ համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ: Համաձայն համայնքներից ստացված հաղորդագրությունների, 2015 թվականի ընթացքում ընթացքում համայնքների ղեկավարների մոտ ընդունելություններին դիմած քաղաքացիների թիվը կազմել է **12573**, մասնակցածների թիվը՝ **11938** համայնքների ավագանիների մոտ համապատասխանաբար՝ **4647** և **4314** մարդ:

Աղյուսակ 15. ՏԻՄ ոլորտի արդյունքային ցուցանիշները

1. Տարածքային կառավարում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝ **Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում**	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում		Իրականացվում է
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում	Մարզային խորհրդին առընթեր ՄԶՀ-ի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի և ՈԱԽ-երի օգտագործում		Իրականացվում է
Միջոցառումներ ***1.1 Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում*** ***1.2 Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտա-կան վերապատրաստման ապահովում***	Ներդրում՝		Իրականացվում է համաձան ՀՀ կառավարության սահմանված կարգի
Արդյունք 2. **Մարզպետարանում աշխատող աշխատակիցների գործունեության համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով ապահովում**	2.1 համակարգիչների թիվ 2.2 համակարգչային ցանց միացած համակարգիչների թիվը 2.3 համակարգչային ծրագրերի թիվ	120 120 8	110 89 6
Միջոցառումներ **2.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում**	Ներդրում	10.0 մլն. դրամ	4.8 մլն. դրամ
Արդյունք 3. **Մարզի բոլոր քաղաքային համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական միջոցներով և ինտերնետով ապահովում**	Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային համայնքներում	10	8

Տեղական ինքնակառավարում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշներ	Թիրախ	Փաստացի

Ոլորտային նպատակ՝ **Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում**	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարավածության աստիճան- 2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր, նախորդ տարվա նկատմամբ:	62 % 110 %	42 % 88 %
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ	**1.1Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ (աճ պլանավորված եկամուտների նկատմամբ)**	8 %	Արդունքները կամփովեն տարեվերջին
Միջոցառումներ 1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2 Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:			Կատարվում է: Վերջնական արդյունքները կամփոփվեն տարեվերջին
Միջոցառումներ 2.2. Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում 2.3. Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում			Կազմվում է
Արդյունք 3. **Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում**	3.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը 2015 թ. աշխատատեղերի կապահովվի համակարգիչներով 3.2 Վերապատրաստում անցած և վկայականներ ստացած համայնքային ծառայողների թիվը 3.3 Վերապատրաստում անցած համայնքապետարանների աշխատողների թիվը 2015 թ. ընթացքում կվերապատրաստվի 3.4.Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվ 3.5 Մասնագիտական որակավորում ստացած ՏԻՄ-երի ղեկավարների ավագանու անդամների թիվը	70% 12% 28 28 40 մարդ 10 40 105	55 % 8 % 18 16 40 մարդ 10 40 88

Միջոցառումներ **3.1 Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով** **3.2 Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում** **3.3 Համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում** **3.4 ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով**			
Արդյունք 4. **Միջհամայնքային միավո-րումների կարողությունները բարձրացվել են**	4.1 ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված միջհամայնքային միավորումների քանակը	20 %	20 %
Միջոցառումներ **4.1 Միջհամայնքային միավորումներին տեխնիկական աջակցության տրամադրում** **4.2 Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում** **4.3 Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել** **4.4 Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում**			
Արդյունք 5. **Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի մշակման որակի բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին**	5.1 ՄԶԾ և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը 2. ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը	45 114	45 114
Միջոցառումներ **5.1.ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում**			
Արդյունք 6. **Համայնքային մակարդակում ՀԿ-ների և ԶԼՄ-ների դերի բարձրացու�**	6.1. Տարբեր հաղորդումների միջոցով հանրության իրազեկման հաղորդումների թիվը 6.2. Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ –ների թիվը յուրաքանչյուր համայնքում 6.3. Ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը	80 կիսամյակային 2 անգամ կիսամյակային մեկ անգամ	60 1 անգամ 1 անգամ

Միջոցառումներ **6.1. Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում** **6.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակերպությունների միջոցով** **6.3. Ավագանու և բնակչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ**			
Արդյունք 7.**ՄԶԾ-ների ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերիի արմատավորում**			
Միջոցառումներ **8.1 ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում** **8.3 Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում** **8.4 ՀԿ ցանցի հետ ՈԱԽ-ներում և ՄԶՀ-ում ՀԿ-ների ներկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում** **8.5 ՄԳ համակարգի շարունակականության ապահովում** **8.6. Իրազեկման միջոցառումների իրականացում**	8.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ 8.2 ՄԶՀ-ի համապատասխան որոշում՝ հաստատված մարզպետի կողմից 8.3 Փոխըմբռնման հուշագրի կնքում 8.4 իրականացված ՄԳ ուսումնասիրությունների թիվ Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվությունների քանակը 8.5. Տարեկան և կիսամյակային հաշվետվությունների պատրաստում 2015 թ-ին 8.5.1. Պետական բյուջեից և դոնորներից մասնակցային մոնիտորինգի միջոցառման ամենամյա անցկացման համար միջոցների ապահովում (տարբեր աղբյուրներ) 8.6. 2015 թ.-ի ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառում-ների քանակը մամուլի ասուլիսի կլոր սեղան լրատվական բնույթի նյութեր	կիսամյակա յին 2 անգամ 2 2 կիսամյակա յին 2 անգամ 12 6 120 հազ. դրամ 4 3 22	1 անգամ 1 1 1 անգամ 6 2 60 հազ. դրամ 3 2 18

9.4. Ֆինանսական բնագավառ

2015 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեներով նախատեսված 993,051.5 հազար դրամ սեփական եկամուտների դիմաց 24.12.2015թ. դրությամբ փաստացի հավաքագրված եկամուտները կազմել են 928,618.2 հազար դրամ, կամ սեփական եկամուտների առաջադրանքը կատարվել է 93.5 %-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակշրջանի համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը պակասել է -3.8 %-ով, կամ հավաքագրման մակարդակը կազմել է -36267.7 հազար դրամ:

2015 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 345,337.5 հազար դրամ հողի հարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 110260.6 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 92.4%:

Հողի հարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացիի համեմատությամբ պակասել է -8.2 %-ով, կամ հավաքագրման մակարդակը կազմել է -28,480.0 հազար դրամ:

2015 թվականի տարեկան ծրագրով մարզի համայնքների բյուջեների եկամուտներում նախատեսված 385,312.9 հազար դրամ գույքահարկի դիմաց փաստացի հավաքագրվել է 375,358.3 հազար դրամ, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 97.4 % :

Գույքահարկի հավաքագրման փաստացի աճի մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի փաստացի համեմատությամբ կազմել է 1.1 %-ով, կամ հավաքագրման մակարդակը կազմել է 3,944.0 հազար դրամ:

ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ 25.12.2015թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

/հազ. դրամ/

Եկամուտների անվանումը	**2015թ.**				
	հաշվարկ.	**փաստ.**	**կատ. %-ը**	**Աճի %-ը 2014թ նկատմամբ**	**Աճը 2014թ. համեմատ /հազ. դրամ./**
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**3,477,659.1**	**3,407,566.9**	**98.0**	**9.3**	**290,293.0**
Սեփական եկամուտներ (Ընդամենը եկամուտներ առանց պաշտոնական դրամաշնորհների)	993,051.5	928,618.2	93.5	-3.8	-36,267.7
ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (ընդամենը գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր, պետական տուրքեր, գույքի վարձակալությունից եկամուտներ)	916,618.2	852,464.6	93.0	-5.6	-50,276.0
Հողի հարկ	345,337.5	319,097.8	92.4	-8.2	-28,480.0
Գույքահարկ	385,312.9	375,358.2	97.4	1.1	3,944.0
Տեղական տուրքեր	30,030.6	26,521.5	88.3	-3.5	-967.0
Պետական տուրքեր	21,100.0	18,615.5	88.2	-7.2	-1,451.0
Գույքի վարձակալությունից եկամուտներ	134,837.2	112,871.6	83.7	-17.1	-23,321.0

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԲՅՈՒՋԵՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/հազ.դրամ/

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Նախատեսված	Փաստացի	կատ. համեմատ %-ը
1	Ապարատ	458498.9	451799.7	98.5
2	Կրթություն	4741486.2	4741485.8	100.0
3	Մշակույթ	3278.2	3278.2	100.0
4	Ճանապարհաշինարարություն	102000.0	102000.0	100.0
5	Տրանսպորտային ծառայություն	1700.0	1700.0	100.0
6	Երաժշտական դպ. փոխհատուցում	21605.6	21605.4	100.0
7	Այլընտրանքային ծառայություն	1800.0	1800.0	100.0
8	Սոց. փաթեթով ապահովվում	211536.0	203014.7	96.0
9	Պետական աջակցություն համայնքներին	94358.3	94358.3	100.0
10	Դասագրքերի վարձավճարի փոխհատուցում	5660.9	5653.7	99.9
11	Պահուստային ֆոնդ	505614.4	497371.0	98.4
	Ընդամենը	**6147538.5**	**6124066.8**	99.6
1	Դոտացիա համայնքներին	2272514.5	2272514.5	100.0

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1. Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Արագածոտնի մարզում հնարավոր են հետևյալ վտանգավոր բնական երևույթները՝

1) **Երկրաբանական վտանգավոր երևույթներ**՝ երկրաշարժեր, ջրակայուն և այլ անբարենպաստ գրունտների զանգվածային դեֆորմացիաներ:

Արագածոտնի մարզի տարածքը բնութագրվում է համեմատաբար միջին սեյսմիկ ակտիվությամբ: Հիմնական ուժեղ երկրաշարժի օջախները գտնվում են մարզի տարածքից դուրս: Մարզում կան տարբեր վթարայնության աստիճանի 12 բազմահարկ շենքեր, որոնք գտնվում են Աշտարակ, Ապարան, Թալին քաղաքներում և Ծաղկահովիտում: Բացի Աշտարակից, մնացած բնակավայրերի շենքները մեծապես տուժել են Սպիտակի երկրաշարժի ժամանակ: Որոշ շենքերում ամրացման աշխատանքներ են կատարվել, սակայն դրանք բավարար չեն դրանց կայունությունը և բնակիչների անվտանգությունն ապահովելու համար:

2) **Օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ՝** ուժեղ քամիներ, ամպրոպ, խոշոր կարկուտ, սառնամանիք, ցրտահարություն, մառախուղ, ուժեղ շոգ, երաշտ:

3) **Հիդրոլոգիական վտանգավոր երևույթներ՝**
Մարզում կան 17 արհեստական ջրամբարներ և լճեր, որոնցից ամենախոշորը Ապարանի ջրամբարն է: Շատ համայնքերի միջով ձգվում են մշտական հոսք չունեցող հեղեղատներ և ձորակներ, որոնք ձնհալի և վարար անձրևների ժամանակ հեղեավտանգ են դառնում: Ամբարտակների փլուզման և հեղեղների ժամանակ ջրածածկման գոտում է հայտնվելու մարզի 17 բնակավայր, որտեղ բնակվում է 29438 մարդ: Ներկայումս բոլոր ջրամբարներն ունեն պատնեշների և ամբարտակների նորոգման ու վերականգնման խիստ կարիք: Վերջին 20 տարում այդ պատնեշները գրեթե չեն նորոգվել: Ընթացիկ նորոգումները կարող են միայն հետաձգել աղետը, բայց կանխել այն ի վիճակի չեն: Այստեղ անհրաժեշտ են մեծ կապտալ ներդրումներ: Համայնքներն իրենց սուղ միջոցներով հնարավորություն չունեն այդ աշխատանքները կատարել: բացի այդ, անհրաժեշտ է նաև խիստ մասնագիտական մոտեցում ցուցաբերել ինչպես հնարավոր աղետի չափերի ու հետևանքների, այնպես էլ պահանջվող ծախսերի, կատարվող աշխատանքների ձևերի ու ծավալների նկատմամբ:

